Ա/Ձ «Երանուհի Թումանյանց Ստեփանի»

Գործադիր տնօրեն Ս. Այվազյան Ս. Այվազյան

Ա/Ձ Ե. Թումանյանց Ե. Թումանյանց





ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՎՃԱՐՈՎԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ  
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԹԻՎ ԹԻՐՎ 16\_22/04\_007

բ. Երևան

05.10.2016 թ.

«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպությունը, այսուհետ «Պատվիրատու», ի դեմս գործադիր տնօրեն Սոնա Այվազյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և Ա/Ձ «Երանուհի Թումանյանց Ստեփանի»-ի, այսուհետ «Կատարող», մյուս կողմից, միասին հիշատակելիս՝ «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ գործող օրենսդրությամբ՝ կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

**1. Պայմանագրի առարկան**

1.1. Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է մատուցել հետևյալ ծառայությունները՝

1.1.1 2016թ. սեպտեմբերի 18-ին և հոկտեմբերի 2-ին ՀՀ մարզերում կայանալիք ՏԻՄ ընտրությունների ընթացքում «Զաղաքացի Դիտորդ» նախաձեռնության շրջանակներում հանդես եկող կազմակերպությունների ներկայացուցիչներին, դիտորդներին և զանգվածային լրատվության միջոցների (այսուհետ նաև ՉԼՄ) ներկայացուցիչների կողմից արձանագրված ընտրական գործընթացի և դրա մասնակիցների իրավունքների խախտումների կապակցությամբ կազմել անհրաժեշտ դիմումներ/բողոքներ, անհրաժեշտության դեպքում՝ այլ փաստաթղթեր և ներկայացնել համապատասխան ընտրական հանձնաժողովներ:

1.1.2. ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները և անգործությունը վերադասության կամ դատական կարգով բողոքարկելու նպատակով կազմել համապատասխան բողոքներ և/կամ հայցադիմումներ, ինչպես նաև անհրաժեշտ այլ փաստաթղթեր:

1.1.3 ըստ անհրաժեշտության, ստացված հաղորդումների հիման վրա օրենքով սահմանված դեպքերում և կարգով դիմել իրավապահ մարմիններին;

1.1.4 անհրաժեշտության դեպքում ներկայացնել «Զաղաքացի Դիտորդ» նախաձեռնության շրջանակներում հանդես եկող կազմակերպությունների ներկայացուցիչներին և վերջիններին շահառու դիտորդների և ՉԼՄ ներկայացուցիչներին շահերը ՀՀ պետական մարմիններում և դատական ատյաններում;

1.1.5.«Զաղաքացի Դիտորդ» նախաձեռնության շրջանակներում հանդես եկող կազմակերպությունների ներկայացուցիչներին և վերջիններին շահառու դիտորդներին և ՉԼՄ ներկայացուցիչներին տրամադրել իրավաբանական/փաստաբանական խորհրդատվություն սույն պայմանագրի առարկայի շրջանակներում;

1.1.6.«Զաղաքացի Դիտորդ» նախաձեռնության շրջանակներում հանդես եկող կազմակերպությունների ներկայացուցիչներին և վերջիններին շահառու դիտորդներին և ՉԼՄ ներկայացուցիչներին տրամադրել իրավաբանական/փաստաբանական խորհրդատվություն բրեթերավական օրենսդրության շրջանակներում հարցաքննությունների և բացատրությունների, ինչպես նաև պետական մարմինների հետ հարաբերությունների կապակցությամբ:

Իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել Ծառայությունների դիմաց՝ համաձայն սույն պայմանագրի 3-րդ կետի պահանջների:

1.2. Սույն Պայմանագրի 1.1. կետում նշված ծառայությունների կատարման ժամկետ է սահմանվում 15.09.2016թ. մինչև 31.12.2016թ. ներառյալ:

**2. Կողմերի իրավունքները և պարտականությունները**

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի Ծառայության կատարման ընթացքը և որակը, առանց միջամտելու Կատարողի գործունեությանը,

2.1.2. Պահանջել Կատարողից պատշաճ կարգով մատուցել Ծառայությունը,

2.1.3. Հաշվետվություն պահանջել Կատարողից Ծառայության մատուցման ընթացքի վերաբերյալ,

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. Վճարել Ծառայության դիմաց սույն պայմանագրի 3 կետի համաձայն,

2.2.2. Կատարողին տրամադրել նրա կողմից Ծառայության մատուցման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն,

2.3. Կատարողն իրավունք ունի՝

2.3.1. Ծառայության մատուցման ընթացքում Պատվիրատուից պահանջել և ստանալ իր կողմից Ծառայության մատուցման համար անհրաժեշտ տեղեկատվություն,

2.3.2. Իր կողմից մատուցված ծառայությունների դիմաց ստանալ վարձատրություն՝ սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում,

2.3.3. Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքի ծավալի փոփոխությունների կապակցությամբ Կողմերը պետք է կնքեն համաձայնություն:

2.4. Կատարողը պարտավոր է՝

2.4.1. Ձեռնամուխ լինել սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցմանը՝ սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից,

2.4.2. Ծառայությունը մատուցել պատշաճ կարգով և որակով,

2.4.3. Ծառայությունը մատուցել ամբողջ ծավալով և սույն պայմանագրով սահմանված ժամկետում,

2.4.4. Խստորեն պահպանել Ծառայությունը մատուցելու կապակցությամբ իրեն հայտնի դարձած բանկային, առևտրային և ծառայողական գաղտնիք հանդիսացող տեղեկությունները և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն կրել դրանք իրապարակելու կամ որևէ ձևով երրորդ անձանց իրազեկելու համար:

**3. Պայմանագրի գինը և հաշվարկման կարգը**

3.1. Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության համար Պատվիրատուն Կատարողին վճարում է ընդամենը 343850 (երեք հարյուր քառասուներեք հազար ութ հարյուր հիսուն) ՀՀ դրամ, ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը:



ք. Երևան

20 դեկտեմբերի, 2016թ.

«Իրավունքի Եվրոպա միավորում» հասարակական կազմակերպությունը, այսուհետ «Պատվիրատու», ի դեմս կազմակերպության նախագահ Լուսինե Հակոբյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և Ա/Ձ «Երանուհի Թումանյանց Ստեփանի»-ի, այսուհետ «Կատարող», մյուս կողմից, միասին հիշատակելիս՝ «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ գործող օրենսդրությամբ՝ կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

### 1. Պայմանագրի առարկան

- 1.1. Սույն պայմանագրով Եվրամիության և Ժողովրդավարության ազգային հիմնադրամի կողմից ֆինանսավորվող «Հանրային վերահսկողություն 2017թ. խորհրդարանական ընտրությունների նկատմամբ» ծրագրի շրջանակներում Կատարողը պարտավորվում է մատուցել ծառայություններ, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել Ծառայությունների դիմաց՝ համաձայն սույն պայմանագրի 3-րդ կետի պահանջների: Մասնավորապես Կատարողը պարտավորվում է՝
  - 1.1.1. Ընտրական օրենսդրության կապակցությամբ Դիտորդների, ՋԼՄ ներկայացուցիչների և այլոց վերապատրաստման ուսուցման համար նախատեսված պրեզենտացիաների, ուսուցման համար անհրաժեշտ այլ նյութերի նախապատրաստում,
  - 1.1.2. Ընտրական գործընթացներում ներգրավվել ցանկացող անձանց համար նախատեսված ձեռնարկի կազմման աշխատանքներին մասնակցություն,
  - 1.1.3. Ընտրական գործընթացներում ներգրավվել ցանկացող անձանց համար ուսուցումների կազմակերպում: Նախատեսվում է 20 վերապատրաստում: Դասընթացները կազմակերպվելու են Երևանում և մարզերում,
  - 1.1.4. Առանձին հատուկ դասընթացներ դիտորդների և ՋԼՄ ներկայացուցիչների համար: Նախատեսվում է 15 վերապատրաստում: Դասընթացները կազմակերպվելու են Երևանում և մարզերում,
  - 1.1.5. Իրականացնել դասընթացներ (կամ օժանդակել դրանց իրականացմանը) դիտորդական առաքելության մեջ ներգրավված իրավաբանների, համակարգողների, համակարգող կենտրոնի օպերատորների և ըստ անհրաժեշտության այլ անձանց համար, ինչպես նաև նախապատրաստել այդ նպատակով այնհրաժեշտ նյութեր:
  - 1.1.6. Քվեարկության օրը դիտորդներին, ՋԼՄ ներկայացուցիչներին, ինչպես նաև համակարգող կենտրոնի օպերատորներին իրավաբանական աջակցության տրամադրում,
  - 1.1.7. Ընտրախախտումների կապակցությամբ բողոքարկում ընտրական հանձնաժողովներ ըստ ենթակայության (տարածքային ընտրական հանձնաժողով), ինչպես նաև բողոքների կապակցությամբ ընդունված որոշումների բողոքարկում ըստ վերադասության,
  - 1.1.8. Տարածքային ընտրական հանձնաժողովների ըստ բողոքների ընդունված որոշումների բողոքարկում ըստ վերադասության (կենտրոնական ընտրական հանձնաժողով),
  - 1.1.9. Ընտրախախտումների կապակցությամբ դատական ատյաններ բողոքների նախապատրաստում և անհրաժեշտության դեպքում մասնակցություն դատական նիստերին, դատարանների որոշումների բողոքարկում,
  - 1.1.10. Ընտրախախտումների կապակցությամբ ըստ Պատվիրատուի գնահատած նպատակահարմարության կազմել և ներկայացնել Մահմանադրական դատարան՝ անհատական դիմումներ և Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարան՝ զանգատներ, ինչպես նաև կատարել դրա համար անհրաժեշտ աշխատանքներ,
  - 1.1.11. Ընտրախախտումների վերաբերյալ, բողոքարկման գործընթացի, կատարված աշխատանքի վերաբերյալ պարբերական զեկույցների և/կամ ամփոփագրերի կազմում և ներկայացում նաև ՋԼՄ-ների միջոցով տարածելու և լուսաբանում ապահովելու համար, ինչպես նաև վերջնական ամփոփիչ զեկույցի մեջ ներառելու համար,
  - 1.1.12. Դիտորդական առաքելության զեկույցի կազմման աշխատանքներին մասնակցություն,
  - 1.1.13. 2017թ. Ազգային ժողովի ընտրությունների շրջանակներում դիտորդական առաքելության ռազմավարական և տակտիկական խնդիրների լուծման համար, ինչպես նաև դիտորդական առաքելության նախապատրաստական աշխատանքների համար անհրաժեշտ այլ ծառայությունների մատուցում,
  - 1.1.14. Մասնակցություն Ազգային ժողովի ընտրությունների կապակցությամբ դիտորդական առաքելության շրջանակներում Պատվիրատուի կողմից կազմակերպվող միջոցառումներին և նախաձեռնություններին:

- 4.1.2. Սույն պայմանագրի 1-ին բաժնի 1.1.3. կետով նախատեսված ծառայությունների մեկ միավորի համար 87,500 (Ութսունյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը և պարտադիր այլ վճարները,
  - 4.1.3. Սույն պայմանագրի 1-ին բաժնի 1.1.4., 1.1.5. կետերով նախատեսված ծառայությունների մեկ միավորի համար 83,000 (Ութսուներեք հազար) ՀՀ դրամ, ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը և պարտադիր այլ վճարները,
  - 4.1.4. Սույն պայմանագրի 1-ին բաժնի 1.1.6. կետով նախատեսված ծառայությունների համար 50,000 (Հիսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը և պարտադիր այլ վճարները,
  - 4.1.5. Սույն պայմանագրի 1-ին բաժնի 1.1.7. կետով նախատեսված ծառայությունների համար 175,000 (Մեկ հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը և պարտադիր այլ վճարները
  - 4.1.6. Սույն պայմանագրի 1-ին բաժնի 1.1.8. կետով նախատեսված ծառայությունների համար 200,000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը և պարտադիր այլ վճարները
  - 4.1.7. Սույն պայմանագրի 1-ին բաժնի 1.1.9. կետով նախատեսված ծառայությունների համար 1,500,150 (Մեկ միլիոն հինգ հարյուր հազար մեկ հարյուր հիսուն) ՀՀ դրամ, ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը և պարտադիր այլ վճարները,
  - 4.1.8. Պայմանագրի 1.3. կետում նշված ծախսերը փոխհատուցվում են համաձայն ներկայացված հաշիվ-ապրանքագրի և ծախսը հավաստող փաստաթղթի:
- 4.2. Կատարողի վճարումը իրականացվում է կամ մաս-մաս կամ միանվագ համաձայն կատարողական ակտի և ներկայացված հաշվի՝ հաշվի ստորագրման օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում: Կատարողին կարող է վճարվել նաև կանխավճար:
  - 4.3. Սույն պայմանագրով նախատեսված Ծառայությունների գումարից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը և պարտադիր այլ վճարները հաշվարկվում և վճարվում են Կատարողի կողմից:
  - 4.4. Բոլոր վճարումները կատարվում են սույն պայմանագրում նշված և հաշվում արտացոլված բանկային հաշվին:

## 5. Պայմանագրի ուժի մեջ մտնելը և ժամկետները

- 5.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների լրիվ և պատշաճ կատարումը:
- 5.2. Ծառայության հանձնումը և ընդունումը կատարվում է Ծառայության հանձնման-ընդունման ակտի երկկողմանի ստորագրմամբ, որը կազմվում և ստորագրվում է Կատարողի կողմից ծառայության ամսական (կամ այլ ժամանակահատվածում) մատուցումից հետո, ներկայացված վավեր հաշվի առկայության դեպքում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 6. Կողմերի պատասխանատվությունը

- 6.1. Կողմերը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում:
- 6.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից և դրա գործողության ողջ ընթացքում պայմանագրով նախատեսված որևէ ծառայության մատուցումը չսկսելու կամ Պատվիրատուի սահմանած ժամկետից ուշացումով սկսելու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տույժ՝ սույն պայմանագրի 3.1. բաժնի համապատասխան կետում(երում) նշված գումարի 5 (հինգ) տոկոսի չափով, բայց ոչ ավել քան այդ բաժնով վճարման ենթակա ընդհանուր գումարի 10 տոկոսը: Նման դեպքերում Կատարողը փոխհատուցում է նաև Պատվիրատուին և/կամ վերջինիս շահառուին հասցված վնասը:
- 6.3. Կատարողի կողմից պայմանագիրը միակողմանի վաղաժամկետ դադարեցնելու կամ Պատվիրատուին որևէ ծառայություն չմատուցելու դեպքում փոխհատուցում է Պատվիրատուին և/կամ վերջինիս շահառուին հասցված վնասը և վճարում է տույժ՝ 3.1. բաժնի համապատասխան կետում(երում) նշված գումարի 5 (հինգ) տոկոսի չափով, բայց ոչ ավել քան այդ բաժնով վճարման ենթակա ընդհանուր գումարի 10 տոկոսը:
- 6.4. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 3.2. կետում նշված ժամկետում սույն պայմանագրով նախատեսված Ծառայության դիմաց վճարումները չկատարելու դեպքում Պատվիրատուն Կատարողին վճարում է տույժ յուրաքանչյուր ուշացրած օրվա համար ժամկետանց գումարի 0,1 տոկոսի չափով, բայց ոչ ավել քան ընդհանուր գումարի 10 տոկոսը:



ք. Երևան

01 դեկտեմբերի, 2017 թ.

«Իրավունքի Եվրոպա միավորում» հասարակական կազմակերպությունը, այսուհետ «Պատվիրատու», ի դեմս կազմակերպության նախագահ Լուսինե Հակոբյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և Ա/Ձ «Երանուհի Թումանյանց Մտեփանի»-ի, այսուհետ «Կատարող», մյուս կողմից, միասին հիշատակելիս՝ «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ գործող օրենսդրությամբ՝ կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

### 1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է մատուցել ծառայություններ, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել Ծառայությունների դիմաց՝ համաձայն սույն պայմանագրի 3-րդ կետի պահանջների: Մասնավորապես Կատարողը պարտավորվում է՝

1.1.1. 2017թ. Ազգային ժողովի ընտրությունների շրջանակներում դիտորդական առաքելության արդյունքում արձանագրված ընտրախախտումների կապակցությամբ ըստ Պատվիրատուի գնահատած նպատակահարմարության կազմել և ներկայացնել Մահմանադրական դատարան՝ անհատական դիմումների և Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարան՝ զանգատների նախագծեր, ինչպես նաև կատարել դրա համար անհրաժեշտ աշխատանքներ,

1.1.2. Ընտրախախտումների վերաբերյալ բողոքարկման գործընթացի, կատարված աշխատանքի վերաբերյալ պարբերական զեկույցների և/կամ ամփոփագրերի կազմում և ներկայացում նաև ՋԼՄ-ների միջոցով տարածելու և լուսաբանում ապահովելու համար, ինչպես նաև վերջնական ամփոփիչ զեկույցի մեջ ներառելու համար,

1.1.3. 2017թ. Ազգային ժողովի ընտրությունների կապակցությամբ դիտորդական առաքելության զեկույցի կազմման աշխատանքներին մասնակցություն,

1.1.4. 2017թ. Ազգային ժողովի ընտրությունների շրջանակներում դիտորդական առաքելության ռազմավարական և տակտիկական խնդիրների լուծման համար, ինչպես նաև դիտորդական առաքելության նախապատրաստական աշխատանքների համար անհրաժեշտ այլ ծառայությունների մատուցում,

1.1.5. Մասնակցություն Ազգային ժողովի ընտրությունների կապակցությամբ դիտորդական առաքելության շրջանակներում Պատվիրատուի կողմից կազմակերպվող միջոցառումներին և նախաձեռնություններին:

1.2. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում «01» դեկտեմբերի 2017 թ. և գործում մինչև «28» փետրվարի 2018 թ-ը: Պայմանագրի գործողության ժամկետի լրանալը հիմք չէ Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջական կատարման համար:



### 2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

#### 2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի Ծառայության կատարման ընթացքը և որակը, առանց միջամտելու և խոչընդոտելու Կատարողի գործունեությանը,

2.1.2. Պահանջել Կատարողից պատշաճ կարգով մատուցել Ծառայությունը,

2.1.3. Հաշվետվություն(ներ) պահանջել Կատարողից Ծառայության մատուցման ընթացքի վերաբերյալ, ցանկացած պարբերականությամբ:

#### 2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. Վճարել Ծառայության դիմաց սույն պայմանագրի 4-րդ բաժնի համաձայն,

2.2.2. Կատարողին տրամադրել նրա կողմից Ծառայության մատուցման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն,

#### 2.3. Կատարողն իրավունք ունի՝

2.3.1. Ծառայության մատուցման ընթացքում Պատվիրատուից պահանջել և ստանալ իր կողմից Ծառայության մատուցման համար անհրաժեշտ տեղեկատվություն,

2.3.2. Իր կողմից մատուցված ծառայությունների դիմաց ստանալ վարձատրություն՝ սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում,

- 6.3. Կատարողի կողմից պայմանագիրը միակողմանի վաղաժամկետ դադարեցնելու կամ Պատվիրատուին որևէ ծառայություն չմատուցելու դեպքում փոխհատուցում է Պատվիրատուին և/կամ վերջինիս շահառուին հասցված վնասը և վճարում է տույժ՝ 4-րդ բաժնի 4.1 կետում(երում) նշված գումարի 5 (հինգ) տոկոսի չափով, բայց ոչ ավել քան այդ բաժնով վճարման ենթակա ընդհանուր գումարի 10 տոկոսը:
- 6.4. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2. կետում նշված ժամկետում սույն պայմանագրով նախատեսված Ծառայության դիմաց վճարումները չկատարելու դեպքում Պատվիրատուն Կատարողին վճարում է տույժ յուրաքանչյուր ուշացրած օրվա համար ժամկետանց գումարի 0,1 տոկոսի չափով, բայց ոչ ավել քան ընդհանուր գումարի 10 տոկոսը:
- 6.5. Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց վրա դրված պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պատասխանատվությունից:

**7. Պայմանագրի փոփոխումը, դադարումը**

- 7.1. Սույն պայմանագիրը կարող է փոփոխվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ լրացուցիչ գրավոր համաձայնագրի կնքելով:
- 7.2. Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ դադարեցվել Պատվիրատուի նախաձեռնությամբ՝ այդ մասին Կատարողին նախապես 5 (հինգ) աշխատանքային օր առաջ տեղյակ պահելով:
- 7.3. Սույն պայմանագիրը Պատվիրատուի նախաձեռնությամբ վաղաժամկետ դադարեցնելու դեպքում Պատվիրատուն Կատարողին վճարում է փաստացի մատուցված ծառայության դիմաց՝ համաձայն երկկողմանի ստորագրված փաստացի մատուցված Ծառայության կատարողական ակտի և ներկայացված հաշիվ ապրանքագրի առկայության:

**8. Վեճերի լուծման կարգը**

- 8.1. Սույն պայմանագրի կատարման ընթացքում Կողմերի միջև ծագած բոլոր վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնության չգալու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

**9. Եզրափակիչ դրույթներ**

- 9.1. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

«Իրավունքի Եվրոպա միավորում» հասարակական կազմակերպություն  
 Իրավաբանական հասցե՝ ՀՀ, ք. Երևան Նիկոլ Դումանի 1, րն. 52  
 Գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փ 101, րն. 4  
 ՀՎՀՀ՝ 00104899

Բանկային տվյալներ՝ «Ամերիաբանկ» ՍՊԸ  
 Խ. Խ 15700 12130890200


**ԿԱՏԱՐՈՂ**

«Երանուհի Թումանյանց Ստեփանի» Ա/Ձ



Նախագահ  Լ. Զախոբյան



Ա/Ձ  Ե. Թումանյանց





ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՎՃԱՐՈՎԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան

«17» դեկտեմբերի 2018թ.

«Վարորդ 911» ՍՊԸ-ն (այսուհետ՝ «Պատվիրատու») (պետ. հաշվ. համար՝ 87.110.973715, ՀՎՀՀ՝ 08621137, հասցե՝ ք.Սևան, Սևանեցու փողոց 21/45) ի դեմս գործադիր տնօրեն Գայանե Հայրումյանի, մի կողմից և ՀՀ փաստաբանների պալատի անդամներ, փաստաբաններ Ա/Չ Գենյա Արամի Պետրոսյանը («Գենյա Պետրոսյան Արամի» ԱՉ, պետ. հաշվ. համար 264.870525, ՀՎՀՀ 81874629, փաստաբանական գործունեության արտոնագիր N 601), Ա/Չ Դավիթ Գեորգիի Գյուրջյանը («Դավիթ Գյուրջյան Գեորգիի» ԱՉ, պետ. հաշվ. համար 21.855145, ՀՎՀՀ 88187501, փաստաբանական գործունեության արտոնագիր N 1897), Ա/Չ Երանուհի Ստեփանի Թումանյանը («Երանուհի Թումանյանց Ստեփանի» ԱՉ, պետ. հաշվ. համար 273.929702, ՀՎՀՀ 84136019, փաստաբանական գործունեության արտոնագիր N 902) (այսուհետ՝ «Կատարողներ») մյուս կողմից (միասին այսուհետ՝ «Կողմեր»), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ «Պայմանագիր») հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

- 1.1. Կատարողները պարտավորվում են Պատվիրատուի հանձնարարությամբ իրավաբանական ծառայություններ մատուցել Պատվիրատուի օգտին, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների դիմաց: Մատուցվելիք իրավաբանական ծառայություններն ընդգրկում են «Վարորդ 911» ՍՊԸ-ի թիվ 4104659 ստուգման ակտի (այսուհետ նաև՝ Ակտ) և դրա դեմ ՀՀ ՊԵԿ գանգատարման հանձնաժողով ներկայացված բողոքի արդյունքում կայացված որոշման վիճարկմանն ուղղված հետևյալ գործողությունները.
  - 1.1.1. Վարչական դատարան հայցադիմում ներկայացնելու նպատակով «Վարորդ 911» ՍՊԸ-ի թիվ 4104659 ստուգման ակտը, դրա դեմ ՀՀ ՊԵԿ գանգատարման հանձնաժողով ներկայացված բողոքի արդյունքում կայացված որոշումն ու դրանց առնչվող փաստաթղթերն ուսումնասիրելը.
  - 1.1.2. Ակտի դեմ հայցադիմում ներկայացնելը ՀՀ վարչական դատարան, այդ թվում՝ դատական վարույթ հարուցելու նպատակով անհրաժեշտ փաստաթղթեր ուսումնասիրելը, Պատվիրատուի ներկայացուցչությունը, շահերի պաշտպանությունը ՀՀ վարչական դատարանում՝ ներկայացված վարչական հայցի քննության շրջանակում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 2.1. Կատարողները պարտավորվում են.
  - 2.1.1. Ծառայությունները մատուցել բարեխիղճ և պատշաճ որակով,
  - 2.1.2. Բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի կամ պատվիրատուի համաձայնության դեպքի չիրապարակել Պատվիրատուի՝ առևտրային, բանկային, ապահովագրական, ծառայողական կամ այլ զաղտնիք

պարունակող տեղեկատվությունը, որն իրենց հայտնի է դարձել Պայմանագրի կատարման ընթացքում,

2.1.3. Պատվիրատուի պահանջով վերջիններիս ներկայացնել ընթացիկ տեղեկատվություն Պայմանագրով նախատեսված Օառայությունների կատարման ընթացքի վերաբերյալ,

2.1.4. Պատվիրատուին նախապես գրավոր զգուշացնել և մինչև Պատվիրատուից գրավոր ցուցում ստանալը դադարեցնել Օառայությունների մատուցումը, եթե հայտնաբերվել են՝

- Օառայությունների մատուցման եղանակների մասին Պատվիրատուի ցուցումների իրագործման հետ կապված, նրա համար անբարենպաստ հնարավոր հետևանքներ,
- Կատարողից անկախ այլ հանգամանքներ, որոնք սպառնում են Օառայությունների մատուցմանը կամ անհնարին դարձնում դրանք ժամանակին ավարտելը կամ առհասարակ շարունակելը:

## 2.2. Կատարողներն իրավունք ունեն՝

2.2.1. Միակողմ հրաժարվել Պայմանագրից՝ այդ մասին առնվազն 15 (տասհինգ) օր առաջ ծանուցելով Պատվիրատուին այն դեպքում, երբ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրով նախատեսված իր պաշտավորությունների խախտելը խոչընդոտում է Պայմանագրի կատարմանը կամ Պատվիրատուն խախտել է սույն Պայմանագրի որևէ դրույթ: Ծանուցումը Պատվիրատուի կողմից ստացվելու պահից Պայմանագիրը համարվում է վաղաժամկետ լուծված:

2.2.2. Ինքնուրույն որոշել Օառայությունների մատուցման ընթացքը և եղանակները՝ հաշվի առնելով Պատվիրատուի շահերը,

2.2.3. Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց, եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 2.1.4 կետում նշված հանգամանքների մասին Կատարողի կողմից նախազգուշացվելուց հետո միջոցներ չի ձեռնարկում այդ հանգամանքների վերացման համար՝ դրանց մասին իրեն հայտնի դառնալուց 10 (տաս) օրվա ընթացքում, եթե Կողմերն այլ համաձայնության չզան,

2.2.4. Իր հաշվին կատարել Օառայությունների մատուցման հետ կապված ծախսերը,

2.2.5. Օառայությունները և ներկայացված հաշիվները համարել Պատվիրատուի կողմից ընդունված՝ 10 օրացույցային օրվա ընթացքում Պատվիրատուի կողմից գրավոր առարկություն չստանալու դեպքում,

2.2.6. Պատվիրատուից պահանջել սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում կատարել վճարումներ,

2.2.7. Պատվիրատուից պահանջել Օառայություններին վերաբերող ստույգ և հավաստի համապատասխան տեղեկություններ և փաստաթղթեր,

2.2.8. Կատարողները սույն պայմանագրով ծառայությունները մատուցում են մինչև նախաձայնեցված կարգով:

## 2.3. Պատվիրատուն պարտավորվում է.

2.3.1. Կազմակերպել Կատարողներին իր կողմից պատշաճ ձևակերպված լիազորագիր (լիազորագրեր) տրամադրելու գործընթացը,

- 2.3.2. Կատարողներին տրամադրել Պայմանագրի 1.1. կետում նշված վարչական վարույթին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթեր, ապացույցներ, ինչպես նաև ցանկացած տիպի գրավոր և կամ (բանավոր) ճշգրիտ և սպառիչ տեղեկատվություն,
- 2.3.3. Չկատարել այնպիսի գործողություններ, որոնք կարող են դժվարացնել կամ անհնարին դարձնել Կատարողների կողմից Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը,
- 2.3.4. Իր գործողություններով և վարքագծով բացառել Կատարողների կողմից կազմված և Պատվիրատուի օգտագործման համար նախատեսված փաստաթղթերի՝ այլ անձանց հասանելի դառնալու հնարավորությունը,
- 2.3.5. Անմիջապես տեղեկացնել Կատարողներին ցանկացած փոփոխության մասին, որը կարող է ազդեցություն ունենալ տրամադրված տեղեկատվության ամբողջականության կամ ճշտության վրա,
- 2.3.6. Առանց Կատարողների հետ նախապես համաձայնեցնելու, չկատարել Պայմանագրի 1.1. կետում նշված վարչական վարույթի/դատական գործի հետ կապված որևէ իրավաչափ կամ ոչ իրավաչափ գործողություն (այդ թվում՝ դիմումների, բողոքների կամ այլ փաստաթղթերի ներկայացում դատարանին և/կամ այլ պետական մարմիններին, վարչական գործին/դատական գործերին առնչվող գրավոր կամ բանավոր հայտարարությունների կատարում և այլն):
- 2.3.7. Սույն պայմանագրով սահմանված ժամկետներում և կարգով կատարել վճարումներ Կատարողներին,
- 2.3.8. Կատարողների կողմից հաշիվ-ապրանքագրերի ներկայացնելու պահից տաս օրացույցային օրվա ընթացքում հաստատել դրանք կամ գրավոր ձևով ներկայացնել իր առարկությունները: Նշված ժամկետում դրանք չներկայացնելու դեպքում հաշիվ ապրանքագիրը (հաշիվ ապրանքագրերը) համարվում է Պատվիրատուի կողմից հաստատված:

#### 2.4. Պատվիրատուն իրավունք ունի.

- 2.4.1. Ցանկացած ժամանակ, սակայն ոչ հաճախ քան 10 (տաս) օրը մեկ անգամ Կատարողներից տեղեկատվություն պահանջել Ծառայությունների կատարման ընթացքի վերաբերյալ,
- 2.4.2. Ցանկացած ժամանակ միակողմանի հրաժարվել Պայմանագրից՝ այդ մասին Կատարողներին առնվազն յոթ օր առաջ ծանուցելու միջոցով՝ փաստացի մատուցված Ծառայության դիմաց Կատարողներին վճարելու պայմանով: Ծանուցումը Կատարողների կողմից ստացվելու պահից Պայմանագիրը համարվում է վաղաժամկետ լուծված:

### 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

- 3.1. Սույն պայմանագրի 1.1. կետում ներառված Ծառայությունների մատուցման դիմաց Պատվիրատուն պարտավորվում է վճարել 150.000 (հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, որը բաժանվում է հավասար չափերով Կատարողների միջև (յուրաքանչյուր Կատարողին վճարման ենթակա գումարը՝ 50.000 ՀՀ դրամ) և վճարվում է հետևյալ կերպ. սույն պայմանագրի կնքման պահից 5-օրյա ժամկետում Պատվիրատուի



կողմից վճարվում է 150.000 (հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ՝ յուրաքանչյուր կատարողի հաշվեհամարին հավասար չափերով (50.000 ՀՀ դրամի չափով) փոխանցում կատարելու միջոցով՝ Կատարողների կողմից ներկայացված հաշիվ-ապրանքագրերի հիման վրա:


- 3.2. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի գնի վճարումը կատարվում է անկանխիկ՝ Կատարողների բանկային հաշիվներին փոխանցում կատարելու միջոցով:

#### 4. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

- 4.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և դադարում է դրանում ամրագրված պարտավորությունների պատշաճ կատարմամբ, ինչպես նաև օրենքով և Պայմանագրով նախատեսված դեպքերում:
- 4.2. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են դատական կարգով՝ միայն Հայաստանի Հանրապետության դատարաններում: Վեճերի նկատմամբ կիրառելի իրավունք է հանդիսանում Հայաստանի Հանրապետության իրավունքը:
- 4.3. Պայմանագիրը կնքված է հավասար իրավաբանական ուժ ունեցող չորս օրինակից, որոնցից մեկը գտնվում է Պատվիրատուի մոտ և մեկական օրինակը գտնվում են Կատարողների մոտ:
- 4.4. Կատարողները որևէ պարագայում չեն երաշխավորում Պատվիրատուի համար գործի դրական ելք: Պատվիրատուն նախագգուշացված է, որ Կատարողները որևէ երաշխիք և խոստում չեն տալիս գործի ելքի վերաբերյալ և պատասխանատվություն չեն կրում պետական և ոչ պետական մարմինների, հիմնարկների կամ կազմակերպությունների որոշումների և դատարանների ընդունած ակտերի համար:
- 4.5. Կողմերը երաշխավորում են, որ իրենք ունեն անհրաժեշտ լիազորություններ սույն պայմանագիրը ստորագրելու համար,
- 4.6. Ծանուցումները համարվում են հասցեատիրոջ կողմից ստացված, եթե դրանք ուղարկվել են Պայմանագրում նշված հասցեով և ստացվել են այդ հասցեում բնակվող (գտնվող) որևէ անձի կողմից: Ծանուցումները համարվում են ստացված նաև այն դեպքում, եթե դրանք Պայմանագրում նշված հասցեով և որևէ պատճառով հասցեատիրոջ կողմից չեն ստացվել (ետ են վերադարձվել ուղարկողին):

5. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


Կատարող
"Գենյա Պետրոսյան Արամի" ԱԶ

ԱԶ  Գ. Պետրոսյան


Կատարող
"Դավիթ Գյուրջյան Գեորգիի" ԱԶ

ԱԶ  Դ. Գյուրջյան

Կատարող
Երանուհի Ստեփանի Թումանյանց" ԱԶ

ԱԶ  Ե. Թումանյանց

Պատվիրատու
«Վարդոյ 911» ՍՊԸ
ՀՎՀՀ՝ 08621137, պետ. հաշվ. համար՝ 87.110.973715
Հասցե՝ ՀՀ, ք.Սևան, Սևանեցու փողոց, 21/45
Բանկային տվյալ՝ Ինեկոբանկ ՓԲԸ Հ/Հ՝ 2052222098711001



Գ. Հայրունյան

## ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

### Վճարովի ծառայությունների մատուցման մասին

ք.Երևան

1 նոյեմբերի, 2018թ.

Ամերիկյան իրավաբանների ընկերակցություն CEELI Inc.-ի հայաստանյան ներկայացուցչությունը (այսուհետև՝ ABA/CEELI), ի դեմս իր տնօրեն Հասմիկ Հակոբյանի, այսուհետև՝ «Պատվիրատու», գործելով ընկերակցության կանոնադրության համաձայն, մի կողմից, և «Երանուհի Թումանյանց Ստեփանի» ԱԶ, չ, պետ. հաշվ. համար

..., այսուհետև՝ «Կատարող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը, այսուհետև՝ «Պայմանագիր», հետևյալի մասին.

#### 1. Պայմանագրի առարկան և այլ դրույթներ

- 1.1 Սույն Պայմանագրով կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել սույն Պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար:
- 1.2 Կատարողը պարտավորվում է մատուցել հետևյալ ծառայությունները.  
«Մարդու իրավունքների պաշտպանության առավել ուժեղ ինստիտուցիոնալ երաշխիքներ Հայաստանում» ծրագրի շրջանակներում հեղինակային խմբի հետ մշակել «Իմացիր քո իրավունքը – ընտրություններ 2018» ձեռնարկի հետևյալ բաժինը (համատեղ) և ենթաբաժինը (համատեղ).

#### 3.Նախընտրական քարոզչություն.

- 3.1. Նախընտրական քարոզչության սկզբունքները
- 3.2. Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը
- 3.3. Քարոզչության իրականացման թույլատրելի վայրերը
- 3.4. Պետական ռեսուրսի չարաշահման արգելք
- 3.5. Նախընտրական քարոզչության ընթացքում նյութապես շահագործելու և բարեգործության արգելք
- 3.6. Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում գործող այլ արգելքներ
- 3.7. Նախընտրական քարոզչությունը վերահսկող մարմիններ, իրավական պատասխանատվություն և բողոքարկման ընթացակարգեր

#### 5. Քվեարկության կարգ.

- 5.5. Իրավական պատասխանատվություն և բողոքարկման ընթացակարգեր  
այսուհետև՝ Ծառայություններ:



- 1.3 Աշխատանքների կատարման ժամկետն է 2018թ. նոյեմբերի 1-ից մինչև 2018թ. նոյեմբերի 15-ը:
- 1.4 Ծառայության արժեքը կազմում է 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ՝ բոլոր հարկերը և պարտադիր վճարները ներառյալ:
- 1.5 Կատարողին սույն պայմանագրի համաձայն արվող վճարման համար հիմք է հանդիսանում «Ծառայությունների կատարման ընդունման-հանձնման ակտը» ստորագրված սույն պայմանագրի կողմերի կողմից:

#### 4. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Կատարողը պարտավոր է.

- 2.1.1 Ծառայությունները մատուցել պատշաճ որակով, կետ 1.3-ում նշված ժամկետում,
- 2.1.2 Մատուցել ծառայություններն անձամբ,
- 2.1.3 Անհրաժեշտության դեպքում պահպանել պայմանագրի դրույթների գաղտնիությունը և երաշխավորել դաշնային ֆինանսավորմամբ պայմանագրերի պահանջներին համապատասխանությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 1-ի:

2.2 Պատվիրատուն պարտավոր է.

- 2.2.1. Մատուցած Ծառայությունների համար վճարել սույն պայմանագրի 1.4 կետում նշված գնին համապատասխան գումար, ծառայությունների կատարման ակտի ստորագրման պահից սկսած 10 օրվա ընթացքում բանկային փոխանցման միջոցով՝ «ԿոնվերսԲանկ» ՓԲԸ 19300 58924950100 հաշվեհամարին:

2.3. Պատվիրատուն իրավունք ունի

- 2.3.1. Ցանկացած ծամանակ ստուգել Կատարողի Ծառայությունների մատուցման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու նրա գործունեությանը:

#### 5. Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրով Կողմերի միջև ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

#### 6. Պայմանագրի փոփոխման, դադարեցման կարգը և գործողության ժամկետը

Սույն պայմանագրում պարզաբանումներ, փոփոխություններ և լրացումներ կատարվում են կողմերի համաձայնությամբ:

Սույն պայմանագիրը դադարում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ, այդ մասին 5 օր առաջ տեղյակ պահելով մյուս կողմին:

Սույն պայմանագիրը իրավաբանական ուժ է ստանում կնքման պահից:

Սույն պայմանագիրը կնքվում է հայերեն, երկու օրինակ, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

#### 7. Կողմերի իրավաբանական հասցեները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ամերիկյան իրավաբանների  
ընկերակցություն CEELI Inc.-ի  
հայաստանյան ներկայացուցչություն  
Տնօրեն  
Համիկ Հակոբյան

*[Handwritten signature]*



ԿԱՏԱՐՈՂ

*[Handwritten signature]*

«Երանուհի Թումանյանց Ստեփանի» ԱԶ

corruption law. Service Provider agrees that in the event the ABA reasonably determines that Service Provider has violated this provision, Service Provider will return all payments made under this Agreement to the ABA within seven business days. Service Provider agrees to indemnify and hold the ABA harmless, including for attorney fees and costs, for any and all claims arising out of its breach or asserted breach of this provision.

անձին օգտագործել իր պաշտոնական դիրքը պաշտոնական գործողությունների կամ որոշումների վրա ներազդելու համար, որպեսզի աջակցի ԱԻԸ համար կամ հետ քիզնես տրամադրելու համար, կամ որևէ քիզնես ուղղորդի որևէ անձի: Կատարողը համաձայն է, որ իր անմիջական պարտավորությունն է ԱԻԸ տեղեկացնել, որ ունի հիմնավոր կասկած այն մասին, որ այն, կամ Կատարողի ներգրաված երրորդ կողմը հավանորեն խախտում է ՕԿՔԱ կամ այլ հակակոռուպցիան կամ կաշառակերության դեմ պայարի մասին օրենքները: Կատարողը համաձայնվում է, որ Կատարողի կողմից սույն դրույթների խախտումը ԱԻԸ կողմից հիմնավորման դեպքում, Կատարողը յոթ աշխատանքային օրվա ընթացքում ԱԻԸ վերադարձնում է սույն Պայմանագրի շրջանակներում կատարված բոլոր վճարումները: Կատարողը համաձայնվում է ԱԻԸ զերծ պահել սույն դրույթի խախտման կամ հաստատված խախտումներից բխող որևէ և/կամ բոլոր հայցերից, ներառյալ փաստաբանի ծախսերը և վճարումները:

I Agree - Service Provider  
Կատարող

Printed Name Armanchi Termyants  
Signature [Signature]  
Date 07.11.2018

Ծանոթացել եմ և համաձայն եմ՝

Ազգանուն, Անուն [Signature]  
Ստորագրություն [Signature]  
Ամսաթիվ 07.11.2018թ.



ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № ԹԻՅԿ 18/53/01-006  
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՎԻ ՄԱՏՈՒՅՄԱՆ

ք. Երևան

01-ը նոյեմբերի, 2018թ.

«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպությունը, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Պատվիրատու, ի դեմս գործադիր տնօրեն Սոնա Այվազյանի, մի կողմից, և Ա/Ձ «ԵՐԱՆՈՒԻՅԻ ԹՈՒՄԱՆՅԱՆՑ ՍՏԵՓԱՆԻ», այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից, միասին հիշատակելիս՝ «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ գործող օրենսդրությամբ՝ կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է 2018թ. դեկտեմբերի 9-ին Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների շրջանակում մատուցել հետևյալ ծառայությունները՝

1.1.1 տրամադրել իրավաբանական խորհրդատվություն ըստ հավելված 1-ում նշված ծառայության տեսակների և արժեքների:

1.2 Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է նաև

1.2.1. իրականացնել դիտորդական առաքելության խնդիրների լուծման համար անհրաժեշտ այլ գործողություններ՝ համակարգողի հանձնարարությամբ,

1.2.2. մասնակցել դիտորդական առաքելության շրջանակներում Պատվիրատուի կողմից կազմակերպվող միջոցառումներին,

1.2.3. կազմել և Պատվիրատուին ներկայացնել մատուցված ծառայության վերաբերյալ պարբերական ամփոփագրեր՝ համաձայն պայմանավորված ժամանակացույցի,

1.2.4 մասնակցել 2018թ. Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների ընթացքում դիտորդական առաքելության շրջանակներում Պատվիրատուի կողմից կազմակերպվող միջոցառումներին, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել Ծառայությունների դիմաց՝ համաձայն սույն պայմանագրի 3-րդ կետի պահանջների:

1.3 Պայմանագրի գործողության ժամկետի ավարտը հիմք չէ պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման համար: Կատարողն իրավունք ունի աշխատանքներն ավարտել ժամկետից շուտ:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի Ծառայության կատարման ընթացքը և որակը, առանց միջամտելու Կատարողի գործունեությանը,

2.1.2. Պահանջել Կատարողից պատշաճ կարգով մատուցել Ծառայությունը,

2.1.3. Հաշվետվություն պահանջել Կատարողից Ծառայության մատուցման ընթացքի վերաբերյալ

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. Վճարել Ծառայության դիմաց սույն պայմանագրի 3 կետի համաձայն,

2.2.2. Կատարողին տրամադրել նրա կողմից Ծառայության մատուցման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն:

2.3. Կատարողն իրավունք ունի՝

2.3.1. Ծառայության մատուցման ընթացքում Պատվիրատուից պահանջել և ստանալ իր կողմից Ծառայության մատուցման համար անհրաժեշտ տեղեկատվություն,

2.3.2. Իր կողմից մատուցված ծառայությունների դիմաց ստանալ վարձատրություն՝ սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում,

2.3.3. Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքի ծավալի փոփոխությունների կապակցությամբ Կողմերը պետք է կնքեն համաձայնություն:

2.4. Կատարողը պարտավոր է՝

2.4.1. Ձեռնամուխ լինել սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցմանը՝ սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից,

2.4.2. Ծառայությունը մատուցել պատշաճ կարգով և որակով,

2.4.3. Ծառայությունը մատուցել ամբողջ ծավալով և սույն պայմանագրով սահմանված ժամկետում,

2.4.4. Խստորեն պահպանել Ծառայությունը մատուցելու կապակցությամբ իրեն հայտնի դարձած բանկային, առևտրային և ծառայողական գաղտնիք հանդիսացող տեղեկությունները և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն կրել դրանք հրապարակելու կամ որևէ ձևով երրորդ անձանց իրազեկելու համար:

### 3. Պայմանագրի գինը և հաշվարկման կարգը

3.1. Սույն Պայմանագրի 1-ին կետով նախատեսված ծառայությունների մատուցման վճարը սահմանվում է Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 1-ում ներկայացված գնացուցակի (ներկայացված գները ներառում են հարկերը):

3.2 Սույն պայմանագրով նախատեսված թիվ 2 Ծառայության իրականացման համար սահմանված վճարի 70 տոկոսը Պատվիրատուն Կատարողին կվճարի մեկ ամսվա ընթացքում՝ ըստ ներկայացված դեպքերի քանակի, իսկ մնացած 30 տոկոսը նշված ծառայության լրիվ մատուցումից հետո՝ ըստ ներկայացված հաշվի:

3.3 Սույն Պայմանագրով սահմանված վճարումները իրականացվում են համաձայն կատարողական ակտ(եր)ի և ներկայացված հաշիվ(ներ)ի՝ հաշվի ստորագրման օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ անկանխիկ եղանակով:

3.4. Սույն պայմանագրով նախատեսված Ծառայությունների գումարից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը և պարտադիր այլ վճարները հաշվարկվում և վճարվում է Կատարողի կողմից:

### 4. Պայմանագրի ուժի մեջ մտնելը և ժամկետները

4.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից և գործում է մինչև 2019 թ. դեկտեմբերի 31-ը:

4.2. Ծառայության հանձնումը և ընդունումը կատարվում է Ծառայության կատարողական ակտի երկկողմանի ստորագրմամբ, որը կազմվում և ստորագրվում է Կատարողի կողմից ծառայության մատուցումից հետո, ներկայացված վավեր հաշվի առկայության դեպքում, տասն աշխատանքային օրվա ընթացքում:

### 5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Կողմերը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում:

5.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 2 օրվա ընթացքում ծառայության մատուցումը չսկսելու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տույժ՝ սույն պայմանագրի 3.1. կետում նշված գումարի 5 (հինգ) տոկոսի չափով, բայց ոչ ավել, քան ընդհանուր գումարի 10 տոկոսը:

5.3. Սույն պայմանագրի 1.2. կետում նշված ժամկետների խախտման դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տույժ՝ յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար սույն պայմանագրի 3.1. կետում նշված գումարի 0,1 տոկոսի չափով, բայց ոչ ավել, քան ընդհանուր գումարի 10 տոկոսը:

5.4. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 3.2. կետում նշված ժամկետում սույն պայմանագրով նախատեսված Ծառայության դիմաց վճարումները չկատարելու դեպքում Պատվիրատուն Կատարողին վճարում է տույժ՝ յուրաքանչյուր ուշացրած օրվա համար ժամկետանց գումարի 0,1 տոկոսի չափով, բայց ոչ ավել, քան ընդհանուր գումարի 10 տոկոսը:

5.5. Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց վրա դրված պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պատասխանատվությունից:

### 6. Պայմանագրի փոփոխումը, դադարումը

6.1. Սույն պայմանագիրը կարող է փոփոխվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ լրացուցիչ գրավոր համաձայնագիր կնքելով:

6.2. Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ դադարեցվել Պատվիրատուի նախաձեռնությամբ՝ այդ մասին Կատարողին նախապես 5 (հինգ) աշխատանքային օր առաջ տեղյակ պահելով:

6.3. Սույն պայմանագիրը Պատվիրատուի նախաձեռնությամբ վաղաժամկետ դադարեցնելու դեպքում Պատվիրատուն Կատարողին վճարում է փաստացի մատուցված ծառայության դիմաց՝ համաձայն երկկողմանի ստորագրված փաստացի մատուցված Ծառայության կատարողական ակտի և ներկայացված հաշիվ ապրանքագրի առկայության:

#### 7. Վեճերի լուծման կարգը

7.1. Սույն պայմանագրի կատարման ընթացքում Կողմերի միջև ծագած բոլոր վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնության չգալու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

#### 8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ԿԱՏԱՐՈՂ

«Թրանսփարտենսի Ինթերնեշլ  
հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական  
կազմակերպություն  
Իրավաբանական հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0002,  
Սարյան 12, 5-րդ հարկ  
Գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0002,  
Սարյան 12, 5-րդ հարկ  
ՀՎՀՀ՝ 00063072  
Բանկային տվյալներ՝ «Էյլ-Էս-Բի-Սի Բանկ  
Հայաստան» ՓԲԸ  
h/h 21700 001-133149-005

Ա/Զ «ԵՐԱՆՈՒԳԻ ԹՈՒՄԱՆՅԱՆՑ  
ՍՏԵՓԱՆԻ»

1..

Գործադիր տնօրեն  Ս. Այվազյան

Ա/Զ  Ե. Թումանյանց





**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՎՃԱՐՈՎԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**ք. Երևան**

**«10» հունիսի 2018թ.**

Աննա Հովհաննեսի Խալաթյանը (նույնականացման քարտ՝ \_\_\_\_\_, տրված \_\_\_\_\_ կողմից, հաշվառված՝ ք. Երևան, \_\_\_\_\_ ) (այսուհետ «Պատվիրատու») մի կողմից և ՀՀ փաստաբանների պալատի անդամներ, փաստաբաններ Ա/Ձ Գենյա Արամի Պետրոսյանը ("Գենյա Պետրոսյան Արամի" ԱՁ, պետ. հաշվ. համար 264.870525, ՀՎՀՀ 81874629, փաստաբանական գործունեության արտոնագիր N 601), Ա/Ձ Դավիթ Գեորգիի Գյուրջյանը ("Դավիթ Գյուրջյան Գեորգիի" ԱՁ, պետ. հաշվ. համար 21.855145, ՀՎՀՀ 88187501, փաստաբանական գործունեության արտոնագիր N 1897), Ա/Ձ Երանուհի Ստեփանի Թումանյանը ("Երանուհի Թումանյանց Ստեփանի" ԱՁ, պետ. հաշվ. համար 273.929702, ՀՎՀՀ 84136019, փաստաբանական գործունեության արտոնագիր N 902) (այսուհետ՝ «Կատարողներ») մյուս կողմից (երկուսը միասին այսուհետ՝ «Կողմեր»), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ «Պայմանագիր») հետևյալի մասին.

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

- 1.1. Կատարողները պարտավորվում են Պատվիրատուի հանձնարարությամբ իրավաբանական ծառայություններ մատուցել Պատվիրատուի օգտին, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների դիմաց: Մատուցվելիք իրավաբանական ծառայություններն ընդգրկում են Աննա Խալաթյանից չկատարված հարկային պարտավորությունը գանձելու վերաբերյալ վարչական ակտի վիճարկմանն ուղղված հետևյալ գործողությունները.
  - 1.1.1. բողոքարկման վարույթ հարուցելու նպատակով Աննա Խալաթյանից չկատարված պարտավորությունը գանձելու վերաբերյալ վարչական ակտի ընդունմանն առնչվող փաստաթղթեր ուսումնասիրելը,
  - 1.1.2. ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմնի բողոքարկման հանձնաժողովին՝ վերոգրյալ վարչական ակտի վիճարկման նպատակով բողոք ներկայացնելը, Պատվիրատուի ներկայացուցչությունը, շահերի պաշտպանությունը բողոքարկման վարույթի շրջանակներում,
  - 1.1.3. բողոքարկման վարույթի ավարտին անբարենպաստ վարչական ակտ ստանալու դեպքում, ըստ անհրաժեշտության՝ դրա դեմ հայցադիմում ներկայացնելը ՀՀ վարչական դատարան, այդ թվում՝ դատական վարույթ հարուցելու նպատակով համապատասխան փաստաթղթեր ուսումնասիրելը, Պատվիրատուի ներկայացուցչությունը, շահերի պաշտպանությունը ՀՀ վարչական դատարանում,
  - 1.1.4. ըստ անհրաժեշտության՝ բողոքարկում ՀՀ վերաքննիչ վարչական և Վճռաբեկ դատարան, Պատվիրատուի ներկայացուցչությունը, շահերի պաշտպանությունը:

- 1.2. Ծառայություններն իրենց մեջ ներառում են.
- 1.2.1. Պայմանագրի 1.1. կետում նշված վարչական վարույթի և դատական գործի (դատական վարույթ հարուցվելու դեպքում) առնչությամբ Պատվիրատուին բանավոր խորհրդատվություն տրամադրելը,
- 1.2.2. Պայմանագրի 1.1. կետում նշված վարչական վարույթին և դատական գործին (դատական վարույթ հարուցվելու դեպքում) առնչվող փաստաթղթերն ուսումնասիրելը,
- 1.2.3. Պայմանագրի 1.1. կետում նշված վարչական վարույթի և դատական գործի համար (դատական վարույթ հարուցվելու դեպքում) անհրաժեշտ փաստաթղթերի և տեղեկությունների ձեռք բերման նպատակով հարցումներ կատարելը, անհրաժեշտ ապացույցների հավաքագրման ուղղությամբ այլ գործողություններ կատարելը,
- 1.2.4. Պայմանագրի 1.1. կետում նշված վարչական վարույթի և դատական գործի (դատական վարույթ հարուցվելու դեպքում) վարման համար անհրաժեշտ դատավարական փաստաթղթերը կազմելը և ներկայացնելը,
- 1.2.5. Որպես Պատվիրատուի ներկայացուցիչ՝ Պայմանագրի 1.1. կետի 1.1.2. ենթակետում նշված ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմնի բողոքարկման հանձնաժողովում վարչական վարույթին մասնակցելը,
- 1.2.6. Որպես Պատվիրատուի ներկայացուցիչ՝ Պայմանագրի 1.1. կետի 1.1.3. (դատական վարույթը հարուցված լինելու դեպքում) և 1.1.4. ենթակետերում նշված դատական գործով նշանակված նիստերին մասնակցելը (անհրաժեշտության դեպքում):

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 2.1. Կատարողները պարտավորվում են.

- 2.1.1. Ծառայությունները մատուցել բարեխիղճ և պատշաճ որակով,
- 2.1.2. Բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի կամ պատվիրատուի համաձայնության դեպքի չհրապարակել Պատվիրատուի՝ առևտրային, բանկային, ապահովագրական, ծառայողական կամ այլ գաղտնիք պարունակող տեղեկատվությունը, որն իրենց հայտնի է դարձել Պայմանագրի կատարման ընթացքում,
- 2.1.3. Պատվիրատուի պահանջով վերջիններիս ներկայացնել ընթացիկ տեղեկատվություն Պայմանագրով նախատեսված Ծառայությունների կատարման ընթացքի վերաբերյալ,
- 2.1.4. Պատվիրատուին նախապես գրավոր զգուշացնել և մինչև Պատվիրատուից գրավոր ցուցում ստանալը դադարեցնել Ծառայությունների մատուցումը, եթե հայտնաբերվել են՝
- Ծառայությունների մատուցման եղանակների մասին Պատվիրատուի ցուցումների իրագործման հետ կապված, նրա համար անբարենպաստ հնարավոր հետևանքներ,
  - Կատարողից անկախ այլ հանգամանքներ, որոնք սպառնում են Ծառայությունների մատուցմանը կամ անհնարին դարձնում դրանք ժամանակին ավարտելը կամ առհասարակ շարունակելը:

## 2.2. Կատարողներն իրավունք ունեն՝

- 2.2.1. Միակողմ հրաժարվել Պայմանագրից՝ այդ մասին առնվազն 15 (տասնհինգ) օր առաջ ծանուցելով Պատվիրատուին այն դեպքում, երբ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրով նախատեսված իր պարտավորությունների խախտելը խոչընդոտում է Պայմանագրի կատարմանը կամ Պատվիրատուն խախտել է սույն Պայմանագրի որևէ դրույթ: Ծանուցումը Պատվիրատուի կողմից ստացվելու պահից Պայմանագիրը համարվում է վաղաժամկետ լուծված:
- 2.2.2. Ինքնուրույն որոշել Ծառայությունների մատուցման ընթացքը և եղանակները՝ հաշվի առնելով Պատվիրատուի շահերը,
- 2.2.3. Հրաժարվել սույն պայմանագրից կատարելուց, եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 2.1.4 կետում նշված հանգամանքների մասին Կատարողի կողմից նախազգուշացվելուց հետո միջոցներ չի ձեռնարկում այդ հանգամանքների վերացման համար՝ դրանց մասին իրեն հայտնի դառնալուց 10 (տաս) օրվա ընթացքում, եթե Կողմերն այլ համաձայնության չգան,
- 2.2.4. Իր հաշվին կատարել Ծառայությունների մատուցման հետ կապված ծախսերը՝ հետագայում Պատվիրատուից փոխհատուցում ստանալու պայմանով, եթե կատարված ծախսերի ընդհանուր արժեքը գերազանցի 10.000 ՀՀ դրամը,
- 2.2.5. Ծառայությունները և ներկայացված հաշիվները համարել Պատվիրատուի կողմից ընդունված՝ 10 օրացույցային օրվա ընթացքում Պատվիրատուի կողմից գրավոր առարկություն չստանալու դեպքում,
- 2.2.6. Պատվիրատուից պահանջել սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում կատարել վճարումներ,
- 2.2.7. Պատվիրատուից պահանջել Ծառայություններին վերաբերող ստույգ և հավաստի համապատասխան տեղեկություններ և փաստաթղթեր,
- 2.2.8. Կատարողները սույն պայմանագրով ծառայությունները մատուցում են միայնց միջև համաձայնեցված կարգով:

## 2.3. Պատվիրատուն պարտավորվում է.

- 2.3.1. Կազմակերպել Կատարողներին իր կողմից պատշաճ ձևակերպված լիազորագիր (լիազորագրեր) տրամադրելու գործընթացը,
- 2.3.2. Կատարողներին տրամադրել Պայմանագրի 1.1. կետում նշված վարչական վարույթին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթեր, սպացույցներ, ինչպես նաև ցանկացած տիպի գրավոր և կամ (բանավոր) ճշգրիտ և սպառիչ տեղեկատվություն,
- 2.3.3. Չկատարել այնպիսի գործողություններ, որոնք կարող են դժվարացնել կամ անհնարին դարձնել Կատարողների կողմից Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը,
- 2.3.4. Իր գործողություններով և վարքագծով բացառել Կատարողների կողմից կազմված և Պատվիրատուի օգտագործման համար նախատեսված փաստաթղթերի՝ այլ անձանց հասանելի դառնալու հնարավորությունը,
- 2.3.5. Անմիջապես տեղեկացնել Կատարողներին ցանկացած փոփոխության մասին, որը կարող է ազդեցություն ունենալ տրամադրված տեղեկատվության ամբողջականության կամ ճշտության վրա,



- 2.3.6. Առանց Կատարողների հետ նախապես համաձայնեցնելու, չկատարել Պայմանագրի 1.1. կետում նշված վարչական վարույթի/դատական գործերի հետ կապված որևէ իրավաչափ կամ ոչ իրավաչափ գործողություն (այդ թվում՝ դիմումների, բողոքների կամ այլ փաստաթղթերի ներկայացում դատարանին և/կամ այլ պետական մարմիններին, վարչական գործին/դատական գործերին առնչվող գրավոր կամ բանավոր հայտարարությունների կատարում և այլն):
- 2.3.7. Սույն պայմանագրով սահմանված ժամկետներում և կարգով կատարել վճարումներ Կատարողներին, ինչպես նաև տրամադրել փոխհատուցումներ Ծառայությունների մատուցման հետ կապված Կատարողների կողմից կատարված ծախսերի դիմաց՝ սույն պայմանագրով նախատեսված դեպքերում՝ նրանց կողմից ներկայացված հաշիվ-ապրանքագրերի և ծախսերը հավաստող փաստաթղթերի (այդ թվում՝ էլեկտրոնային) հիման վրա,
- 2.3.8. Կատարողների կողմից հաշիվ-ապրանքագրերի ներկայացնելու պահից տաս օրացույցային օրվա ընթացքում հաստատել դրանք կամ գրավոր ձևով ներկայացնել իր առարկությունները: Նշված ժամկետում դրանք չներկայացնելու դեպքում հաշիվ ապրանքագիրը (հաշիվ ապրանքագրերը) համարվում է Պատվիրատուի կողմից հաստատված:

#### 2.4. Պատվիրատուն իրավունք ունի.

- 2.4.1. Ցանկացած ժամանակ, սակայն ոչ հաճախ քան 10 (տաս) օրը մեկ անգամ Կատարողներից տեղեկատվություն պահանջել Ծառայությունների կատարման ընթացքի վերաբերյալ,
- 2.4.2. Ցանկացած ժամանակ միակողմանի հրաժարվել Պայմանագրից՝ այդ մասին Կատարողներին առնվազն յոթ օր առաջ ծանուցելու միջոցով՝ փաստացի մատուցված Ծառայության դիմաց Կատարողներին վճարելու պայմանով: Ծանուցումը Կատարողների կողմից ստացվելու պահից Պայմանագիրը համարվում է վաղաժամկետ լուծված:

### 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

- 2.3.4. Կատարողների կողմից հաշիվ-ապրանքագրերի ներկայացնելու պահից տաս օրացույցային օրվա ընթացքում հաստատել դրանք կամ գրավոր ձևով ներկայացնել իր առարկությունները: Նշված ժամկետում դրանք չներկայացնելու դեպքում հաշիվ ապրանքագրերը համարվում են Պատվիրատուի կողմից հաստատված:



#### 2.4. Պատվիրատուն իրավունք ունի.

- 2.4.1. Ցանկացած ժամանակ, սակայն ոչ հաճախ քան 10 (տաս) օրը մեկ անգամ Կատարողներից տեղեկատվություն պահանջել Ծառայությունների կատարման ընթացքի վերաբերյալ,
- 2.4.2. Ցանկացած ժամանակ միակողմանի հրաժարվել Պայմանագրից՝ այդ մասին Կատարողներին առնվազն յոթ օր առաջ ծանուցելու միջոցով՝ փաստացի մատուցված Ծառայության դիմաց Կատարողներին վճարելու պայմանով: Ծանուցումը Կատարողների կողմից ստացվելու պահից Պայմանագիրը համարվում է վաղաժամկետ լուծված:

### 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

- 3.1. Սույն պայմանագրի 1.1.1 կետում ներառված Ծառայությունների գինը կազմում է 249.000 (երկու հարյուր քառասունինը հազար) ՀՀ դրամ, որը բաժանվում է հավասար չափերով Կատարողների միջև (յուրաքանչյուր Կատարողին վճարման ենթակա գումարը՝ 83.000 ՀՀ դրամ) և վճարվում է հետևյալ կերպ. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի հայցի ապահովման միջոց կիրառելու որոշման հիման վրա ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից վարույթ հարուցելու որոշումը ստանալուց հետո մեկամսյա ժամկետում Պատվիրատուի կողմից վճարվում է 150.000 ՀՀ դրամ՝ յուրաքանչյուր կատարողի հաշվեհամարին հավասար չափերով (50.000 ՀՀ դրամի չափով) փոխանցում կատարելու միջոցով՝ Կատարողների կողմից ներկայացված հաշիվ-ապրանքագրերի հիման վրա: Պայմանագրի գնի մնացյալ մասը (99.000 ՀՀ դրամ) վճարվում է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից ներկայացված հայցադիմումի հիման վրա դատական ակտն ընդունելուց հետո 10-օրյա ժամկետում՝ յուրաքանչյուր կատարողի հաշվեհամարին հավասար չափերով (33.000 ՀՀ դրամի չափով) փոխանցում կատարելու միջոցով. սույն պայմանագրով Ծառայությունների մատուցումը համարվում է վերջնականապես ավարտված վերջնական դատական ակտի կայացման պահից:
- 3.2. Ծառայությունների համար վճարումը և/կամ հաշիվ-ապրանքագրի ստորագրումը հավաստում է Ծառայության ընդունման մասին, եթե այլ բան չի նախատեսվում Կողմերի համաձայնությամբ:


### 4. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

- 4.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և դադարում է դրանում ամրագրված պարտավորությունների պատշաճ կատարմամբ, ինչպես նաև օրենքով և Պայմանագրով նախատեսված դեպքերում:
- 4.2. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են դատական կարգով՝ միայն Հայաստանի Հանրապետության դատարաններում: Վեճերի նկատմամբ կիրառելի իրավունք է հանդիսանում Հայաստանի Հանրապետության իրավունքը:


- 4.3. Պայմանագիրը կնքված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող չորս օրինակից, որոնցից մեկը գտնվում է Պատվիրատուի մոտ և մեկական օրինակը գտնվում են Կատարողների մոտ:
- 4.4. Կատարողները որևէ պարագայում չեն երաշխավորում Պատվիրատուի և Երրորդ անձի համար գործի դրական ելք: Պատվիրատուն նախազգուշացված է, որ Կատարողները որևէ երաշխիք և խոստում չեն տալիս գործի ելքի վերաբերյալ և պատասխանատվություն չեն կրում պետական և ոչ պետական մարմինների, հիմնարկների կամ կազմակերպությունների որոշումների և դատարանների քննունած ակտերի համար:
- 4.5. Կողմերը երաշխավորում են, որ իրենք ունեն անհրաժեշտ լիազորություններ սույն պայմանագիրը ստորագրելու համար:
- 4.6. Ծանուցումները համարվում են հասցեատիրոջ կողմից ստացված, եթե դրանք ուղարկվել են Պայմանագրում նշված հասցեով և ստացվել են այդ հասցեում բնակվող (գտնվող) որևէ անձի կողմից: Ծանուցումները համարվում են ստացված նաև այն դեպքում, եթե դրանք Պայմանագրում նշված հասցեով և որևէ պատճառով հասցեատիրոջ կողմից չեն ստացվել (ետ են վերադարձվել ուղարկողին):

5 ԿՈՂՄԵՐԻՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


Կատարող
"Գեկյա Պետրոսյան Արամի" Ա/Զ

Ա/Զ  Գ. Պետրոսյան


Կատարող
«Էլինա Գյուրջյան Յուրիի» Ա/Զ

Ա/Զ  Է. Գյուրջյան

Կատարող
"Երանուհի Ստեփանի Թումանյանց" Ա/Զ

Ա/Զ  Ե. Թումանյանց

Պատվիրատու
Արամ Աշոտի Գասպարյան

 Ա. Գասպարյան

ՇԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՎԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ք. Երևան

02.09.2019թ.

«Իրավունքի զարգացման և պաշտպանության» հիմնադրամը, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս տնօրեն Գենյա Պետրոսյանի, որը գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ԱԶ «Երանուհի Թումանյանց Ստեփանի»-ը, այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով՝ Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել սույն պայմանագրի 1.2. կետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար:

1.2. Կատարողը պարտավորվում է Բաց Հասարակության Ինստիտուտի Օժանդակության հիմնադրամի ֆինանսավորմամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրի (դրամաշնորհ թիվ G20060) շրջանակներում մատուցել հետևյալ ծառայությունները (այսուհետ՝ «Ծառայություններ»)՝

1.2.1. Տեղեկատվության ազատության ոլորտում ազգային օրենսդրության ուսումնասիրություն և համեմատական վերլուծություն՝ միջազգային չափանիշներին և լավագույն միջազգային փորձին համապատասխան:

1.2.2. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին հասցեագրվող հարցումների բովանդակության մշակում:

1.2.3. Ուղարկված հարցումների պատասխանների վերլուծություն:

1.2.4. Մասնակցություն տարբեր պետական մարմինների, ինչպես նաև առանձին կազմակերպությունների հետ հանդիպումներին և քննարկումներին՝ ուսումնասիրության առարկային առնչվող հարցերով:

1.2.5. Տեղեկատվության մատչելիությանն առնչվող դատական պրակտիկայի ուսումնասիրություն և վերլուծություն:

1.2.6. Հանրային նշանակություն ունեցող տեղեկատվության հասանելիության ոլորտում ուրվագծված խնդիրների քարտեզագրում:

1.2.7. Իրականացված ուսումնասիրությունների և վերլուծության արդյունքում ամփոփիչ զեկույցի և առաջարկությունների փաթեթի մշակում՝ տեղեկատվության մատչելիության բնագավառին առնչվող օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի բարելավման նպատակով:

1.2.8. Մասնակցություն ամփոփիչ զեկույցի մշակմանն ու ներկայացմանը:

1.2.9. Տեղեկատվության ազատության ոլորտում համապարփակ ուսումնասիրության կատարման համար անհրաժեշտ այլ ծառայությունների մատուցում՝ Ծրագրի ղեկավարի հանձնարարությամբ:

1.3. Ծառայությունները մատուցվում են մաս-մաս՝ ըստ սույն պայմանագրի անբաժանելի մասը համարվող թիվ 1 Հավելվածով սահմանված Ծառայությունների ժամանակացույցի:



- 1.4. Ծառայությունների մատուցման ժամկետն է՝ 02.09.2019թ.-ից մինչև 29.02.2020թ.:
- 1.5. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում մինչև 29.02.2020թ.:

## 2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

- 2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝
- 2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի Ծառայությունների կատարման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը,
- 2.1.2. Պահանջել Կատարողից պատշաճ կարգով մատուցել Ծառայությունները,
- 2.1.3. Հաշվետվություն պահանջել Կատարողից Ծառայությունների մատուցման ընթացքի վերաբերյալ,
- 2.1.4. Մինչև հանձնման-ընդունման ակտի ստորագրումը՝ 2 /երկու/ աշխատանքային օր առաջ ծանուցելու պայմանով, հրաժարվել պայմանագիրը կատարելուց՝ Կատարողին վճարելով սահմանված գնի այն մասը, որը համապատասխանում է մինչև պայմանագրի կատարումից Պատվիրատուի հրաժարման մասին տեղեկություն ստանալը մատուցված Ծառայությունների չափին:
- 2.2. Պատվիրատուն պարտավոր է՝
- 2.2.1. Վճարել Ծառայության դիմաց սույն պայմանագրի 3-րդ կետին համապատասխան,
- 2.2.2. Կատարողին տրամադրել նրա կողմից Ծառայությունների մատուցման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն:
- 2.3. Կատարողն իրավունք ունի՝
- 2.3.1. Ծառայությունների մատուցման ընթացքում Պատվիրատուից պահանջել և ստանալ իր կողմից Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ տեղեկատվություն,
- 2.3.2. Իր կողմից մատուցված ծառայությունների դիմաց ստանալ վարձատրություն՝ սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում:
- 2.4. Կատարողը պարտավոր է՝
- 2.4.1. Ձեռնամուխ լինել սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցմանը՝ սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից,
- 2.4.2. Ծառայությունը մատուցել բարեխիղճ, պատշաճ կարգով և որակով,
- 2.4.3. Ծառայությունը մատուցել ամբողջ ծավալով և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում,
- 2.4.4. Պատվիրատուի պահանջով վերջինիս ներկայացնել ընթացիկ տեղեկատվություն Պայմանագրով նախատեսված Ծառայությունների կատարման ընթացքի վերաբերյալ,
- 2.4.5. Պատվիրատուի պահանջով 5 /հինգ/ աշխատանքային օրվա ընթացքում անհատույց վերացնել հայտնաբերված բոլոր թերությունները,
- 2.4.6. Անձամբ մատուցել Ծառայությունները:

### 3. Պայմանագրի գինը և հաշվարկման կարգը

3.1. Ծառայությունների վճարումը կատարվում է թիվ 1 Հավելվածով նախատեսված ժամանակացույցով սահմանված Ծառայությունների ամենամսյա մատուցման արդյունքներով՝ տվյալ ամսվա համար նախատեսված Ծառայությունների մատուցումից հետո ներկայացված հաշվի հիման վրա՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում: Ծառայությունների ամենամսյա վճարի չափը կազմում է 476100 (չորս հարյուր յոթանասուն վեց հազար մեկ հարյուր դրամ) ՀՀ դրամ (ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը):

3.2. Հաշիվը Կատարողի կողմից Պատվիրատուին է ներկայացվում Ծառայությունների հանձնման-ընդունման ակտը Կողմերի կողմից ստորագրելուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում:

3.3. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի գնի վճարումը կատարվում է անկանխիկ՝ Կատարողի բանկային հաշվին փոխանցում կատարելու միջոցով՝ հանձնման-ընդունման ակտերի և ներկայացված հաշիվների հիման վրա:

### 4. Ծառայությունների հանձնման – ընդունման կարգը

4.1. Մատուցված ծառայությունների կամ դրանց մի մասի հանձնումը և ընդունումը կատարվում է Ծառայությունների ամենամսյա հանձնման-ընդունման ակտերի երկկողմանի ստորագրմամբ, որոնք կազմվում են Կատարողի կողմից յուրաքանչյուր ամսվա համար սույն պայմանագրի 1-ին Հավելվածի ժամանակացույցով նախատեսված ծառայությունների մատուցումից հետո՝ հաշվետու ամսվա 25-րդ օրվանից մինչև հաջորդող ամսվա 5-ը: Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում հանձնման-ընդունման ակտի ստորագրված երկու օրինակ:

4.2. Պատվիրատուն հանձնման-ընդունման ակտը ստանալուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը, կամ Ծառայությունը չընդունելու դեպքում վերջինիս ներկայացնում է պատճառաբանված մերժում:

4.3. Հանձնման-ընդունման ակտը ստորագրվում է Պատվիրատուի կողմից, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման ակտ չի ստորագրվում և Պատվիրատուն հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն Պայմանագրով նախատեսված միջոցները:

### 5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայություններ մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2. Սույն պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցման ժամկետները խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է

տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հայուրերրդական) տոկոսի չափով:

5.3. Սույն պայմանագրի 5.2-րդ կետով սահմանված տույժը հաշվարկվում և հաշվանցվում է Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից:

5.4. Տույժի վճարումը Կատարողին չի ազատում իր պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

5.5. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 6. Պայմանագրի փոփոխումը և դադարումը

6.1. Սույն պայմանագիրը կարող է փոփոխվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ լրացուցիչ գրավոր համաձայնագիր կնքելով:

6.2. Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ դադարեցվել Պատվիրատուի նախաձեռնությամբ՝ այդ մասին Կատարողին նախապես 2 (երկու) աշխատանքային օր առաջ տեղյակ պահելով:

6.3. Կատարողն իրավունք ունի հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց՝ պատվիրատուի վնասները լրիվ հատուցելու պայմանով /դրանց առկայության դեպքում/՝ 5 /հինգ/ աշխատանքային օր առաջ ծանուցելու պայմանով:

## 7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:




## 8. Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի կատարման ընթացքում Կողմերի միջև ծագած բոլոր վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնության չգալու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

9. Եզրափակիչ դրույթներ

Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

<p style="text-align: center;"><b>ՊԱՏՎԻՐԱՏՈՒ</b> «Իրավունքի զարգացման և պաշտպանության» հիմնադրամ</p> <p>Գրանցման համար՝ 222.160.1021328 Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 5-35 ՀՎՀՀ՝ 02677492 Հ/Հ՝ 11817000727201 Բանկ՝ «Այդի Բանկ» ՓԲԸ «Վարդանանց» մասնաճյուղ</p> <p>Տնօրեն՝  Գ. Գազարյան Կ.Տ.</p> 	<p style="text-align: center;"><b>ԿԱՏԱՐՈՂ</b> «Երանուհի Թումանյանց Ստեփանի» Ա/Ձ</p> <p>Ա/Ձ  Ե. Թումանյանց Կ.Տ.</p>
---	--



	Գործողություն	Ամիս	Արդյունք
1	<p>1. Տեղեկատվության ազատության ոլորտում ազգային օրենսդրության ուսումնասիրություն և համեմատական վերլուծություն՝ միջազգային չափանիշներին և լավագույն միջազգային փորձին համապատասխան.</p> <p>2. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին հասցեագրվող հարցումների բովանդակության մշակում և ուղարկում.</p>	Սեպտեմբեր 2019թ.	<p>1. Կվերանայվեն «Տեղեկատվության ազատության մասին», «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքները և ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը (նյութերի նախապատրաստման և նախաքննության փուլերում տեղեկատվության մատչելիության, ինչպես նաև կալանավորման մասին որոշումների հանրային հասանելիության համատեքստում՝ գործը դատաքննության նշանակելուց հետո), կառանձնացվեն հանրային նշանակության տեղեկությունների հասանելիության ապահովման բնագավառում առկա հիմնական խնդիրները: Դասակարգիչների ցանկի հնարավոր ընդլայնման տեսանկյունից կվերանայվեն քրեական գործերին վերաբերող հրապարակման ենթակա վիճակագրական տվյալների դասակարգմանն առնչվող իրավական ակտերը:</p> <p>2. Մոտ 50 հարցումներ կնախապատրաստվեն և կուղարկվեն նախապես որոշված մարմիններին:</p>
2	<p>3. Տեղեկատվության ազատության ոլորտում ազգային օրենսդրության ուսումնասիրություն և համեմատական վերլուծություն՝ միջազգային չափանիշներին և լավագույն միջազգային փորձին համապատասխան.</p> <p>4. Հարցումների պատասխանների վերլուծություն.</p> <p>5. Քննարկումներ/հանդիպումներ ոլորտում մասնագիտացած կազմակերպությունների և մարմինների հետ.</p>	Հոկտեմբեր 2019 թ.	<p>3. Կվերանայվեն «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը (հատուկ ուշադրություն դարձնելով սեփականության, եկամուտների ու շահերի հայտարարագրմանը), ՀՀ դատական օրենսգիրքը (հատուկ ուշադրություն դարձնելով դատավորների ընտրության (նշանակման) համակարգին և նրանց նկատմամբ հարուցվող կարգապահական վարույթներին), «Պետական և ծառայողական գույտնիքի մասին» ՀՀ օրենքը և ՀՀ կառավարության համապատասխան որոշումները, կառանձնացվեն հանրային նշանակության տեղեկությունների հասանելիության ապահովման բնագավառում առկա</p>



			<p>հիմնական խնդիրները:</p> <p>4. Կվերլուծվեն ուղարկված հարցումների պատասխանները, կառանձնացվեն համապատասխան տեղեկությունների մատչելիությանն առնչվող հիմնական գործնական խնդիրները:</p> <p>5. Քննարկումներ կանցկացվեն տեղեկատվության ազատության ոլորտում մասնագիտացած հասարակական կազմակերպությունների, այդ բնագավառում փորձառություն ունեցող փաստաբանների, Անձնական տվյալների պաշտպանության գործակալության և այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ՝ ոլորտի գործնական խնդիրների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու նպատակով (Անհրաժեշտության դեպքում այս գործողությունը կարող է հետաձգվել և կատարվել այլ ամսվա կամ ամիսների ընթացքում):</p>
3	<p>6. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին հասցեագրվող լրացուցիչ հարցումների բովանդակության մշակում և ուղարկում.</p> <p>7. Տեղեկատվության ազատության ոլորտում ազգային օրենսդրության ուսումնասիրություն և համեմատական վերլուծություն՝ միջազգային չափանիշներին և լավագույն միջազգային փորձին համապատասխան.</p> <p>8. Քննարկումներ/հանդիպումներ ոլորտում մասնագիտացած կազմակերպությունների և մարմինների հետ.</p>	<p>Նոյեմբեր, 2019 թ.</p>	<p>6. Մոտ 50 հարցումներ կնախապատրաստվեն և կուղարկվեն նախապես որոշված մարմիններին:</p> <p>7. Կվերանայվեն «Արխիվային գործի մասին», «Գնումների մասին» և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքները, կառանձնացվեն հանրային նշանակության տեղեկատվության մատչելիության ապահովման բնագավառում առկա հիմնական խնդիրները:</p> <p>8. Քննարկումներ կանցկացվեն տեղեկատվության ազատության ոլորտում մասնագիտացած հասարակական կազմակերպությունների, այդ բնագավառում փորձառություն ունեցող փաստաբանների, Անձնական տվյալների պաշտպանության գործակալության և այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ՝ ոլորտի</p>

			գործնական խնդիրների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու նպատակով (Անհրաժեշտության դեպքում այս գործողությունը կարող է հետաձգվել և կատարվել այլ ամսվա կամ ամիսների ընթացքում):
4	<p>9. Տեղեկատվության ազատությանն առնչվող դատական պրակտիկայի ուսումնասիրություն.</p> <p>10. Հարցումների պատասխանների վերլուծություն.</p> <p>11. Հանրային նշանակության տեղեկատվության հասանելիության ոլորտում ուրվագծված խնդիրների քարտեզագրում, այդ թվում՝ ազգային օրենսդրության և իրավակիրառ պրակտիկային, ինչպես նաև ինստիտուցիոնալ համակարգին առնչվող՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների համատեքստում:</p>	Դեկտեմբեր, 2019 թ.	<p>9. Մանրամասն կուսումնասիրվի դատական պրակտիկան, հետևություններ կմշակվեն տեղեկատվության ազատության իրավունքի գործնական ապահովման խոչընդոտների վերաբերյալ: Հատուկ ուշադրություն կդարձվի տեղեկատվության տրամադրման մերժման հիմնավորումներին, կուրվագծվեն օրենսդրության և դատական պրակտիկայի բնագավառներում առկա հիմնական խնդիրները:</p> <p>10. Կվերլուծվեն ուղարկված հարցումների պատասխանները, կառանձնացվեն համապատասխան տեղեկությունների մատչելիությանն առնչվող հիմնական գործնական խնդիրները:</p> <p>11. Կամփոփվի ոլորտում առկա խնդիրների քարտեզագրման փաստաթուղթը:</p>
5.	<p>12. Տեղեկատվության ազատությանն առնչվող դատական պրակտիկայի ուսումնասիրության շարունակություն.</p> <p>13. Ռազմավարական և իրավական բնույթի առաջարկությունների մշակում՝ իրականացված ուսումնասիրության արդյունքների հիման վրա.</p>	Հունվար, 2020 թ.	<p>12. Մանրամասն կուսումնասիրվի դատական պրակտիկան, հետևություններ կմշակվեն տեղեկատվության ազատության իրավունքի գործնական ապահովման խոչընդոտների վերաբերյալ: Հատուկ ուշադրություն կդարձվի տեղեկատվության տրամադրման մերժման հիմնավորումներին, կուրվագծվեն օրենսդրության և դատական պրակտիկայի բնագավառներում առկա հիմնական խնդիրները (Շարունակություն):</p> <p>13. Կնախապատրաստվի ռազմավարական և իրավական բնույթի առաջարկությունների փաթեթը.</p>

6.	14. Ամփոփիչ զեկույցի եզրափակում և հանրային ներկայացում.	Փետրվար, 2020 թ.	14. Իրականացված համապարփակ ուսումնասիրության արդյունքների, ռազմավարական և իրավական բնույթի առաջարկությունների փաթեթի ամփոփում՝ ամփոփիչ զեկույցի տեսքով բացահայտված բոլոր խնդիրների հասցեագրմամբ: 14.1. Չեկույցի հանրային ներկայացում:
----	---	------------------	---

<p style="text-align: center;"><b>ՊԱՏՎԻՐԱՏՈՒ</b> «Իրավունքի զարգացման և պաշտպանության» հիմնադրամ</p> <p>Գրանցման համար՝ 222.160.1021328      Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 5-35      ՀՎՀՀ՝ 02677492      Հ/Հ՝ 11817000727201      Բանկ՝ «Այդի Բանկ» ՓԲԸ, Վարդանանց մասնաճյուղ</p> <p>Տնօրեն՝  Ե. Թումանյան</p> <p>Կ.Տ.</p>	<p style="text-align: center;"><b>ԿԱՏԱՐՈՂ</b> «Երանուհի Թումանյանց Ստեփանի» Ա/Չ</p> <p>Ա/Չ  Ե. Թումանյանց</p> <p>Կ.Տ.</p>
---	---

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՎԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ք. Երևան

01.09.2020թ.

«Իրավունքի զարգացման և պաշտպանության» հիմնադրամը, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս տնօրեն Գենյա Պետրոսյանի, որը գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և Ա/Ձ «Երանուհի Ստեփանի Թումանյանց»-ը, այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով՝ Կատարողը պարտավորվում է մատուցել սույն պայմանագրի 1.2. կետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար:

1.2. Կատարողը պարտավորվում է Բաց Հասարակության Ինստիտուտի Օժանդակության հիմնադրամի ֆինանսավորմամբ իրականացվող՝ «ՀՀ - ԵՄ միջև Համապարփակ և Ընդլայնված Գործընկերության Համաձայնագրի կիրարկման մշտադիտարկում՝ քրեական և քրեական դատավարության օրենսդրության, ընտրական օրենսդրության բարեփոխումների, հավաքների ազատության, ՋԼՄ-ի, տեղեկատվության ու կարծիքի արտահայտման ազատության ոլորտներում» դրամաշնորհային ծրագրի (դրամաշնորհ թիվ G2019) շրջանակներում մատուցել հետևյալ ծառայությունները (այսուհետ՝ «Ծառայություններ»).

1.2.1. համակարգել Համապարփակ և Ընդլայնված Գործընկերության Համաձայնագրի շրջանակում օրենսդրական, վարքային և նյութական տեսակի ծրագրային գործողությունների իրականացման գնահատման աշխատանքները,

1.2.2. քննարկել և ամփոփել իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական հարթակում տեղադրված վերաբերելի նախագծերը և անհրաժեշտության դեպքում համակարգել դրանց բարելավմանն ուղղված առաջարկները համապատասխան հարթակում ներկայացնելու աշխատանքները.

1.2.3. համակարգել վերաբերելի նախագծերի մշակման մասնակցային գործընթացի գնահատումը հարցումների կատարման, Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական հարթակում գետեղված ամբողջական տեղեկատվության, այդ թվում՝ ամփոփաթերթի գնահատման միջոցով.

1.2.4. մասնակցել և ներկայացնել քաղաքացիական հասարակության համատեղ մշտադիտարկման ճանապարհային քարտեզով ամրագրված առաջարկությունները, ինչպես նաև դրանց հիմնավորումները հասարակական կազմակերպություններին և իրավասու մարմիններին՝ դրանց ընդունումը խթանելու նպատակով.

1.2.5. հանդիպումների կամ առցանց քննարկումների միջոցով առանձին առաջարկներ քննարկել իրավասու մարմինների ներկայացուցիչներին, ոլորտում հասարակական /մասնագիտացած/ կազմակերպությունների հետ՝ դրանց ընդունման անհրաժեշտությունը պարզաբանելու և գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով,

1.2.6. համակարգել ներկայացված առաջարկների ընդունման և իրագործման ուղղությամբ ՀՀ կառավարության և այլ իրավասու մարմինների ձեռնարկած միջոցառումների մշտադիտարկման և գնահատման աշխատանքները,

1.2.7. մշակել քաղաքական փաստաթղթեր, իրականացնել հետազոտություններ, համակարգել վերլուծական աշխատանքների կատարումը,

1.2.8. համակարգել և ամփոփել հաշվետվությունների կազմումը՝ մշտադիտարկվող ոլորտների/գործողությունների վերաբերյալ,

1.2.9. ամփոփել իրականացված մոնիտորինգի վերաբերյալ վերջնական փաստաթուղթը, մասնակցել համապատասխան հանրային քննարկումներին:

1.2.10. իրականացնել Ծրագրի նպատակների և ակնկալվող արդյունքների ապահովման համար անհրաժեշտ այլ գործողություններ:

1.3. Ծառայությունների մատուցման ժամկետն է՝ 01.09.2020թ.-ից մինչև 31.12.2021թ.:

1.5. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում մինչև 31.12.2021թ.:

## 2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի Ծառայությունների կատարման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը,

2.1.2. Պահանջել Կատարողից պատշաճ կարգով մատուցել Ծառայությունները,

2.1.3. Հաշվետվություն պահանջել Կատարողից Ծառայությունների մատուցման ընթացքի վերաբերյալ,

2.1.4. Մինչև հանձնման-ընդունման ակտի ստորագրումը՝ 2 /երկու/ աշխատանքային օր առաջ ծանուցելու պայմանով, հրաժարվել պայմանագիրը կատարելուց՝ Կատարողին վճարելով սահմանված գնի այն մասը, որը համապատասխանում է մինչև պայմանագրի կատարումից Պատվիրատուի հրաժարման մասին տեղեկություն ստանալը մատուցված Ծառայությունների չափին:

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. Վճարել Ծառայության դիմաց սույն պայմանագրի 3-րդ կետին համապատասխան,

2.2.2. Կատարողին տրամադրել նրա կողմից Ծառայությունների մատուցման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն:

2.3. Կատարողն իրավունք ունի՝

2.3.1. Ծառայությունների մատուցման ընթացքում Պատվիրատուից պահանջել և ստանալ իր կողմից Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ տեղեկատվություն,

2.3.2. Իր կողմից մատուցված ծառայությունների դիմաց ստանալ վարձատրություն՝ սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում:

2.4. Կատարողը պարտավոր է՝

2.4.1. Ձեռնամուխ լինել սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցմանը՝ սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից,

2.4.2. Ծառայությունը մատուցել բարեխիղճ, պատշաճ կարգով և որակով,



2.4.3. Ծառայությունը մատուցել ամբողջ ծավալով և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում,

2.4.4. Պատվիրատուի պահանջով վերջինիս ներկայացնել ընթացիկ տեղեկատվություն Պայմանագրով նախատեսված Ծառայությունների կատարման ընթացքի վերաբերյալ,

2.4.5. Պատվիրատուի պահանջով 5 /հինգ/ աշխատանքային օրվա ընթացքում անհատույց վերացնել հայտնաբերված բոլոր թերությունները,

2.4.6. Անձամբ մատուցել Ծառայությունները:

### 3. Պայմանագրի գինը և հաշվարկման կարգը

3.1. Ծառայությունների վճարումը կատարվում է Ծառայությունների ամենամսյա մատուցման արդյունքներով՝ ներկայացված հաշվի հիման վրա՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում: Ծառայությունների ամենամսյա վճարի չափը կազմում է 76.250 (յոթանասունվեց հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ (ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը):

3.2. Հաշիվը Կատարողի կողմից Պատվիրատուին է ներկայացվում Ծառայությունների հանձնման-ընդունման ակտը Կողմերի կողմից ստորագրելուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում:

3.3. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի գնի վճարումը կատարվում է անկանխիկ՝ Կատարողի բանկային հաշվին փոխանցում կատարելու միջոցով՝ հանձնման-ընդունման ակտերի և ներկայացված հաշիվների հիման վրա:

### 4. Ծառայությունների հանձնման – ընդունման կարգը

4.1. Մատուցված ծառայությունների կամ դրանց մի մասի հանձնումը և ընդունումը կատարվում է Ծառայությունների ամենամսյա հանձնման-ընդունման ակտերի երկկողմանի ստորագրմամբ, որոնք կազմվում են Կատարողի կողմից յուրաքանչյուր ամսվա համար՝ հաշվետու ամսվա 25-րդ օրվանից մինչև հաջորդող ամսվա 5-ը: Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում հանձնման-ընդունման ակտի ստորագրված երկու օրինակ:

4.2. Պատվիրատուն հանձնման-ընդունման ակտը ստանալուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը, կամ Ծառայությունը չընդունելու դեպքում վերջինիս ներկայացնում է պատճառաբանված մերժում:

4.3. Հանձնման-ընդունման ակտը ստորագրվում է Պատվիրատուի կողմից, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման ակտ չի ստորագրվում և Պատվիրատուն հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն Պայմանագրով նախատեսված միջոցները:

### 5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայությունների մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2. Սույն պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցման ժամկետները խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է սույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հայուրերրորդական) տոկոսի չափով:

5.3. Սույն պայմանագրի 5.2-րդ կետով սահմանված սույժը հաշվարկվում և հաշվանցվում է Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից:

5.4. Տույժի վճարումը Կատարողին չի ազատում իր պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

5.5. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 6. Պայմանագրի փոփոխումը և դադարումը

6.1. Սույն պայմանագիրը կարող է փոփոխվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ լրացուցիչ գրավոր համաձայնագիր կնքելով:

6.2. Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ դադարեցվել Պատվիրատուի նախաձեռնությամբ՝ այդ մասին Կատարողին նախապես 2 (երկու) աշխատանքային օր առաջ տեղյակ պահելով:

6.3. Կատարողն իրավունք ունի հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց՝ պատվիրատուի վնասները լրիվ հատուցելու պայմանով /դրանց առկայության դեպքում/՝ 5 /հինգ/ աշխատանքային օր առաջ ծանուցելու պայմանով:

## 7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:



## 8. Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի կատարման ընթացքում Կողմերի միջև ծագած բոլոր վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնության չգալու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

9. Եզրափակիչ դրույթներ

Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
<p>«Իրավունքի զարգացման և պաշտպանության» հիմնադրամ</p> <p>Գրանցման համար՝ 222.160.1021328 Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 5-35 ՀՎՀՀ՝ 02677492 Հ/Հ՝ 11817000727201 Բանկ՝ «Այդի Բանկ» ՓԲԸ «Վարդանանց» մասնաճյուղ</p> <p>Տնօրեն՝  Գենյա Պետրոսյան</p> <p>Կ.Տ.</p>	<p>«Երանուհի Ստեփանի Թումանյանց» Ա/Ձ</p> <p>Ա/Ձ  Ե. Թումանյանց</p> <p>Կ.Տ.</p>

## Համաձայնագիր թիվ 1

Ծառայությունների վճարովի մատուցման 01.09.2020թ. պայմանագրի

ք. Երևան

03.09.2020թ.

«Իրավունքի զարգացման և պաշտպանության» հիմնադրամը, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս տնօրեն Գեյյա Պետրոսյանի, որը գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ԱԶ «Երանուհի Թումանյանց Ստեփանի»-ն, այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից, կնքեցին սույն Համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Կողմերը համաձայնեցին 01.09.2020թ. կողմերի միջև կնքված Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը լրացնել 1.2.11.-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.2.11. մշակել մարդու իրավունքների պաշտպանության և խթանման բնագավառներում քաղաքականության փաստաթղթեր՝ տվյալ ծառայության համար սույն պայմանագրի 3.1.1.-րդ ենթակետով սահմանված վճարման պայմաններով »:

2. Կողմերը համաձայնեցին լրացնել 01.09.2020թ. կողմերի միջև կնքված Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը 3.1.1.-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«3.1.1. Սույն պայմանագրի 1.2.11-րդ ենթակետով սահմանված ծառայության վճարումը կատարվում է 379 800 (երեք հարյուր յոթանասուներեք հազար ութ հարյուր) ՀՀ դրամի չափով (ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը):




3. Կողմերը համաձայնեցին 01.09.2020թ. կողմերի միջև կնքված Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի 4.1.-րդ ենթակետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

“4.1. Մատուցված ծառայությունների կամ դրանց մի մասի հանձնումը և ընդունումը կատարվում է Ծառայությունների ամենամսյա հանձնման-ընդունման ակտերի երկկողմանի ստորագրմամբ, որոնք կազմվում են Կատարողի կողմից յուրաքանչյուր ամսվա համար՝ հաշվետու ամսվա 25-րդ օրվանից մինչև հաջորդող ամսվա 5-ը՝ բացառությամբ Պայմանագրի 1.2.11-րդ ենթակետով սահմանված ծառայության, որի հանձնումը և ընդունումը կատարվում է ծառայության մատուցման արդյունքում ներկայացված հանձնման-ընդունման ակտի երկկողմանի ստորագրմամբ: Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում հանձնման-ընդունման ակտի ստորագրված երկու օրինակ”:

4. Սույն համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

<p style="text-align: center;"><b>ՊԱՏՎԻՐԱՏՈՒ</b></p> <p style="text-align: center;">«Իրավունքի զարգացման և պաշտպանության» հիմնադրամ</p> <p>Գրանցման համար՝ 222.160.1021328 Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 5-35 ՀՎՀՀ՝ 02677492 Հ/Հ՝ 11817000727201 Բանկ՝ «Այբի Բանկ» ՓԲԸ «Վարդանանց» մասնաձյուն</p> <p>Տնօրեն՝  Քենյա Պետրոսյան</p> <p>Կ.Տ.</p> 	<p style="text-align: center;"><b>ԿԱՏԱՐՈՂ</b></p> <p style="text-align: center;">«Երանուհի Թումանյանց Ստեփանի» ԱԶ</p> <p>ԱԶ  Ե. Թումանյանց</p> <p>Կ.Տ.</p>
---	--



ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՎՃԱՐՈՎԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
ԹԻՂԿ-20/34-001

ք. Երևան

«02» նոյեմբերի 2020թ.

«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպությանը՝ ի դեմս գործադիր տնօրեն՝ Սոնա Այվազյանի (ՀՎՀՀ՝ 00063072, վկայական 03Ա060363, գրանցման համարը 211.171.01741, գտնվելու վայր՝ ք. Երևան, 0002 Սարյան 12) (այսուհետ՝ «Պատվիրատու») մի կողմից և ՀՀ փաստաբանների պալատի անդամներ, փաստաբաններ Ա/Ձ Դավիթ Գեորգիի Գյուրջյանը («Դավիթ Գյուրջյան Գեորգիի» ԱՁ, պևտ. հաշվ. համար 21.855145, ՀՎՀՀ 88187501, փաստաբանական գործունեության արտոնագիր N 1897), Ա/Ձ Գենյա Արամի Պետրոսյանը («Գենյա Պետրոսյան Արամի» ԱՁ, պևտ. հաշվ. համար 264.870525, ՀՎՀՀ 81874629, փաստաբանական գործունեության արտոնագիր N 601), Ա/Ձ Երանուհի Ստեփանի Թումանյանը («Երանուհի Թումանյան Ստեփանի» ԱՁ, պևտ. հաշվ. համար 273.929702, ՀՎՀՀ 84136019, փաստաբանական գործունեության արտոնագիր N 902) (այսուհետ՝ «Կատարողներ») մյուս կողմից (միասին այսուհետ՝ «Կողմեր»), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ «Պայմանագիր») հետևյալի մասին.

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կատարողները պարտավորվում են Պատվիրատուի հանձնարարությամբ իրավաբանական ծառայություններ մատուցել Պատվիրատուի օգտին, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների դիմաց: Մատուցվելիք իրավաբանական ծառայություններն ընդգրկում են հետևյալ գործողությունները.

- 1.1. Ուսումնասիրել անհրաժեշտ փաստաթղթերը, կազմել և դատարան ներկայացնել հայցադիմում՝ ՀՀ փոխվարչապետ Տիգրան Ավինյանին և նրա գրասենյակին «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպությանը 01.07.2020թ. հարցմամբ հայցված տեղեկատվությունն ամբողջությամբ /ներառյալ հայցված փաստաթղթերը/ տրամադրելու պարտավորեցման պահանջով:
- 1.2. Հարուցված դատական գործի շրջանակում՝ Վարչական, Վերաքննիչ վարչական, Վճռաբեկ և Սահմանադրական դատարաններում ներկայացնել Պատվիրատուի շահերը, մասնակցել դատական նիստերին և կատարել բոլոր անհրաժեշտ գործողությունները, այդ թվում՝ ըստ անհրաժեշտության վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ կամ պատասխաններ, Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու, ինչպես նաև գործով անհրաժեշտ ապացույցների ձեռքբերման և ներկայացման հետ:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### 2.1. Կատարողները պարտավորվում են.

- 2.1.1. Ծառայությունները մատուցել բարեխիղճ և պատշաճ որակով,
- 2.1.2. Պատվիրատուի պահանջով վերջիններիս ներկայացնել ընթացիկ տեղեկատվություն Պայմանագրով նախատեսված Ծառայությունների կատարման ընթացքի վերաբերյալ,
- 2.1.3. Պատվիրատուին նախապես գրավոր զգուշացնել և մինչև Պատվիրատուից գրավոր ցուցում ստանալը դադարեցնել Ծառայությունների մատուցումը, եթե հայտնաբերվել են՝
  - Ծառայությունների մատուցման եղանակների մասին Պատվիրատուի ցուցումների իրագործման հետ կապված, նրա համար անբարենպաստ հնարավոր հետևանքներ,
  - Կատարողից անկախ այլ հանգամանքներ, որոնք սպառնում են Ծառայությունների մատուցմանը կամ անհնարին դարձնում դրանք ժամանակին ավարտելը կամ առհասարակ շարունակելը:

2.1.4. Հետևել Պատվիրատուի կողմից սահմանված և Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Վարքագծի կանոններին /Հավելված 1/:

## 2.2. Կատարողներն իրավունք ունեն՝

- 2.2.1. Միակողմ հրաժարվել Պայմանագրից՝ այդ մասին առնվազն 15 (տասհինգ) օր առաջ ծանուցելով Պատվիրատուին այն դեպքում, երբ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրով նախատեսված իր պարտավորությունների խախտելը խոչընդոտում է Պայմանագրի կատարմանը կամ Պատվիրատուն խախտել է սույն Պայմանագրի որևէ դրույթ: Ծանուցումը Պատվիրատուի կողմից ստացվելու պահից Պայմանագիրը համարվում է վաղաժամկետ լուծված:
- 2.2.2. Ինքնուրույն որոշել Ծառայությունների մատուցման ընթացքը և եղանակները՝ հաշվի առնելով Պատվիրատուի շահերը,
- 2.2.3. Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց, եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 2.1.3 կետում նշված հանգամանքների մասին Կատարողի կողմից նախագրուշացվելուց հետո միջոցներ չի ձեռնարկում այդ հանգամանքների վերացման համար՝ դրանց մասին իրեն հայտնի դառնալուց 10 (տաս) օրվա ընթացքում, եթե Կողմերն այլ համաձայնության չգան,
- 2.2.4. Ծառայությունները և ներկայացված հաշիվները համարել Պատվիրատուի կողմից ընդունված՝ 10 օրացույցային օրվա ընթացքում Պատվիրատուի կողմից գրավոր առարկություն չստանալու դեպքում,
- 2.2.5. Պատվիրատուից պահանջել սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում կատարել վճարումներ,
- 2.2.6. Պատվիրատուից պահանջել Ծառայություններին վերաբերող ստույգ և հավաստի համապատասխան տեղեկություններ և փաստաթղթեր,
- 2.2.7. Կատարողները սույն պայմանագրով ծառայությունները մատուցում են միմյանց միջև համաձայնեցված կարգով:

## 2.3. Պատվիրատուն պարտավորվում է.

- 2.3.1. Կազմակերպել Կատարողներին իր կողմից պատշաճ ձևակերպված լիազորագիր (լիազորագրեր) տրամադրելու գործընթացը,
- 2.3.2. Կատարողներին տրամադրել անհրաժեշտ փաստաթղթեր, ապացույցներ, ինչպես նաև ցանկացած տեսակի գրավոր և կամ (բանավոր) ճշգրիտ և սպառիչ տեղեկատվություն,
- 2.3.3. Չկատարել այնպիսի գործողություններ, որոնք կարող են դժվարացնել կամ անհնարին դարձնել Կատարողների կողմից Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը,
- 2.3.4. Իր գործողություններով և վարքագծով բացառել Կատարողների կողմից կազմված և Պատվիրատուի օգտագործման համար նախատեսված փաստաթղթերի՝ այլ անձանց հասանելի դառնալու հնարավորությունը,
- 2.3.5. Անմիջապես տեղեկացնել Կատարողներին ցանկացած փոփոխության մասին, որը կարող է ազդեցություն ունենալ տրամադրված տեղեկատվության ամբողջականության կամ ճշտության վրա,
- 2.3.6. Առանց Կատարողների հետ նախապես համաձայնեցնելու, չկատարել հանձնարարության հետ կապված որևէ իրավաչափ կամ ոչ իրավաչափ գործողություն (այդ թվում՝ դիմումների, բողոքների կամ այլ փաստաթղթերի ներկայացում դատարանին և/կամ այլ պետական մարմիններին):
- 2.3.7. Սույն պայմանագրով սահմանված ժամկետներում և կարգով կատարել վճարումներ Կատարողներին, ինչպես նաև տրամադրել փոխհատուցումներ Ծառայությունների մատուցման հետ կապված Կատարողների կողմից կատարված ծախսերի դիմաց՝ նրանց կողմից ներկայացված հաշիվ-ապրանքագրերի և ծախսերը հավաստող փաստաթղթերի (այդ թվում՝ էլեկտրոնային) հիման վրա,

2.3.8. Կատարողների կողմից հաշիվ-ապրանքագրերի ներկայացնելու պահից տաս օրացույցային օրվա ընթացքում հաստատել դրանք կամ գրավոր ձևով ներկայացնել իր առարկությունները: Նշված ժամկետում դրանք չներկայացնելու դեպքում հաշիվ ապրանքագիրը (հաշիվ ապրանքագրերը) համարվում է Պատվիրատուի կողմից հաստատված:

#### 2.4. Պատվիրատուն իրավունք ունի.

2.4.1. Ցանկացած ժամանակ, սակայն ոչ հաճախ քան 10 (տաս) օրը մեկ անգամ Կատարողներից տեղեկատվություն պահանջել Ծառայությունների կատարման ընթացքի վերաբերյալ,

2.4.2. Ցանկացած ժամանակ միակողմանի հրաժարվել Պայմանագրից՝ այդ մասին Կատարողներին առնվազն յոթ օր առաջ ծանուցելու միջոցով՝ փաստացի մատուցված Ծառայության դիմաց Կատարողներին վճարելու պայմանով: Ծանուցումը Կատարողների կողմից ստացվելու պահից Պայմանագիրը համարվում է վաղաժամկետ լուծված:

### 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի 1-ին կետում ներառված Ծառայությունների մատուցման դիմաց Պատվիրատուն պարտավորվում է վճարել 800.000 (ութե հարյուր հազար) ՀՀ դրամ, որը բաժանվում է հետևյալ չափերով Կատարողների միջև՝

- 300.000 ՀՀ դրամ- Ա/Ձ Գենյա Պետրոսյան
- 250.000 ՀՀ դրամ- Ա/Ձ Երանուհի Թումանյան
- 250.000 ՀՀ դրամ-Ա/Ձ Դավիթ Գյուրջյան

Սույն գումարը ներառում է նաև ծառայությունների մատուցման հետ կապված դատարան դիմելու ծախսերը: Սույն գումարի վճարումը կիրականացվի հետևյալ կերպ. 150.000 ՀՀ դրամ յուրաքանչյուր Կատարողին ծառայությունների մատուցման սկզբից 10 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ վճարի մնացորդը՝ ծառայությունների մատուցման ավարտի ժամանակ՝ հաշիվ-ապրանքագրի հիման վրա:

3.2. Հաշիվ-ապրանքագրի ստորագրումը հավաստում է Ծառայության ընդունման մասին:

3.3. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի գնի վճարումը կատարվում է անկանխիկ՝ Կատարողների բանկային հաշիվներին փոխանցում կատարելու միջոցով:

### 4. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

4.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և դադարում է դրանում ամրագրված պարտավորությունների պատշաճ կատարմամբ, ինչպես նաև օրենքով և Պայմանագրով նախատեսված դեպքերում:

4.2. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են դատական կարգով՝ միայն Հայաստանի Հանրապետության դատարաններում: Վեճերի նկատմամբ կիրառելի իրավունք է հանդիսանում Հայաստանի Հանրապետության իրավունքը:

4.3. Պայմանագիրը կնքված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող չորս օրինակից, որոնցից մեկը գտնվում է Պատվիրատուի մոտ և մեկական օրինակը գտնվում են Կատարողների մոտ:

4.4. Կատարողները որևէ պարագայում չեն երաշխավորում Պատվիրատուի համար գործի դրական ելք: Պատվիրատուն նախագուշացված է, որ Կատարողները որևէ երաշխիք և խոստում չեն տալիս գործի ելքի վերաբերյալ և պատասխանատվություն չեն կրում պետական և ոչ պետական մարմինների, հիմնարկների կամ կազմակերպությունների որոշումների և դատարանների ընդունած ակտերի համար:

4.5. Կողմերը երաշխավորում են, որ իրենք ունեն անհրաժեշտ լիազորություններ սույն պայմանագիրը ստորագրելու համար,



## ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

### ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՎԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ք. Երևան

01.02.2021թ.

«Իրավունքի զարգացման և պաշտպանության» հիմնադրամը, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս տնօրեն Գենյա Պետրոսյանի, որը գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ԱԶ «Երանուհի Թումանյանց Ստեփանի»-ն, այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

#### 1. Պայմանագրի առարկան

1.1. Կատարողը պարտավորվում է մատուցել սույն պայմանագրի 1.2. կետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար:

1.2. Կատարողը պարտավորվում է Բաց Հասարակության Ինստիտուտի Օժանդակության հիմնադրամի ֆինանսավորմամբ իրականացվող ՀՀ Աշխատանքային օրենսդրության աշխատանքային իրավունքի բնագավառում միջազգային ստանդարտներին և պարտավորություններին համապատասխանեցնելու խթանմանն ուղղված դրամաշնորհային ծրագրի (դրամաշնորհ թիվ G20247) շրջանակներում մատուցել հետևյալ ծառայությունները (այսուհետ՝ «Ծառայություններ»):

1.2.1. Իրականացնել աշխատանքային իրավունքների ոլորտում միջազգային իրավական փաստաթղթերի և չափանիշների ուսումնասիրություն:

1.2.2. Իրականացնել ՀՀ աշխատանքային օրենսդրության ուսումնասիրություն և կատարել համեմատական վերլուծություն միջազգային չափանիշների հետ:

1.2.3. Իրականացնել աշխատանքային իրավունքի ոլորտում ձևավորված ՀՀ դատական և իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրություն՝ վերհանելով առանցքային և համակարգային խնդիրները:

1.2.4. Վերը նշված աշխատանքի հիման վրա նախապատրաստել ՀՀ-ում աշխատանքային իրավունքների ապահովման վիճակի վերաբերյալ վերլուծություն:

1.3. Ծառայությունների մատուցման ժամկետն է՝ 01.02.2021թ.-ից մինչև 31.05.2021թ.:

1.4. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում մինչև 31.05.2021թ.:

#### 2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի Ծառայությունների կատարման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը,

2.1.2. Պահանջել Կատարողից պատշաճ կարգով մատուցել Ծառայությունները,

2.1.3. Հաշվետվություն պահանջել Կատարողից Ծառայությունների մատուցման ընթացքի վերաբերյալ,

2.1.4. Մինչև հանձնման-ընդունման ակտի ստորագրումը՝ 2 /երկու/ աշխատանքային օր առաջ ծանուցելու պայմանով, հրաժարվել պայմանագիրը կատարելուց՝ Կատարողին վճարելով սահմանված գնի այն մասը, որը համապատասխանում է մինչև պայմանագրի կատարումից Պատվիրատուի հրաժարման մասին տեղեկություն ստանալը մատուցված Ծառայությունների չափին:



2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. Վճարել Ծառայության դիմաց սույն պայմանագրի 3-րդ կետին համապատասխան,

2.2.2. Կատարողին տրամադրել նրա կողմից Ծառայությունների մատուցման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն:

2.3. Կատարողն իրավունք ունի՝

2.3.1. Ծառայությունների մատուցման ընթացքում Պատվիրատուից պահանջել և ստանալ իր կողմից Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ տեղեկատվություն,

2.3.2. Իր կողմից մատուցված ծառայությունների դիմաց ստանալ վարձատրություն՝ սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում:

2.4. Կատարողը պարտավոր է՝

2.4.1. Ձեռնամուխ լինել սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցմանը՝ սույն պայմանագրին ուժի մեջ մտնելու պահից,

2.4.2. Ծառայությունը մատուցել բարեխիղճ, պատշաճ կարգով և որակով,

2.4.3. Ծառայությունը մատուցել ամբողջ ծավալով և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում,

2.4.4. Պատվիրատուի պահանջով վերջինիս ներկայացնել ընթացիկ տեղեկատվություն Պայմանագրով նախատեսված Ծառայությունների կատարման ընթացքի վերաբերյալ,

2.4.5. Պատվիրատուի պահանջով 5 /հինգ/ աշխատանքային օրվա ընթացքում անհատույց վերացնել հայտնաբերված բոլոր թերությունները,

2.4.6. Անձամբ մատուցել Ծառայությունները:

### 3. Պայմանագրի գինը և հաշվարկման կարգը

3.1. Ծառայությունների համար ընդհանուր վճարը կազմում է 777405 (յոթ հարյուր յոթանասուկյոթ հազար չորս հարյուր հինգ) ՀՀ դրամ (ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը): Ծառայությունների վճարումը կատարվում է Ծառայությունների ամենամսյա մատուցման արդյունքներով՝ ներկայացված հաշվի հիման վրա՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում և կազմում է ամսական 194351 (հարյուր ինսունչորս հազար երեք հարյուր հիսունմեկ) ՀՀ դրամ (ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը):

3.2. Հաշիվը Կատարողի կողմից Պատվիրատուին է ներկայացվում Ծառայությունների հանձնման-ընդունման ակտը Կողմերի կողմից ստորագրելուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում:

3.3. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի գնի վճարումը կատարվում է անկանխիկ՝ Կատարողի բանկային հաշվին փոխանցում կատարելու միջոցով՝ հանձնման-ընդունման ակտերի և ներկայացված հաշիվների հիման վրա:

### 4. Ծառայությունների հանձնման – ընդունման կարգը

4.1. Մատուցված ծառայությունների կամ դրանց մի մասի հանձնումը և ընդունումը կատարվում է Ծառայությունների հանձնման-ընդունման ակտերի երկկողմանի ստորագրմամբ, որոնք կազմվում են Կատարողի կողմից յուրաքանչյուր ամսվա համար՝ հաշվետու ամսվա 25-րդ օրվանից մինչև հաջորդող ամսվա 5-ը: Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում հանձնման-ընդունման ակտի ստորագրված երկու օրինակ:

4.2. Պատվիրատուն հանձնման-ընդունման ակտը ստանալուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը, կամ Ծառայությունը չընդունելու դեպքում վերջինիս ներկայացնում է պատճառաբանված մերժում:

4.3. Հանձնման-ընդունման ակտը ստորագրվում է Պատվիրատուի կողմից, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման ակտ չի ստորագրվում և Պատվիրատուն հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն Պայմանագրով նախատեսված միջոցները:

#### 5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայությունների մատուցման սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

